ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ
16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1994 Թ., ԹԻՎ 21 (40)
ԳԻՆԸ՝ 10 ԴՐԱՄ



ԲՈՒՏՐՈՍ ՂԱԼԻ.

— ՄԱԿ-ը ելնում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքից։

— ՄԱԿ-ը կօգնի Վրաստանին՝ հաղթահարելու դժվարությունները։

— ՄԱԿ-ը Հայաստանը դիտում է որպես տարածաշրջանում կայունության չափանիշ։

ՄԱԿ-ի գոյության տասնամյակների ընթացքում նրա գլխավոր քարտուղարն առաջին անգամ այցելեց Անդրկովկաս, այն էլ՝ տարածաշրջանի համար շատ ծանր, լարված ժամանակներում։ Դիվանագիտական զգույշ, մշուշոտ, բազմիմաստ արտահայտությունները միշտ էլ բնորոշ են եղել նման դիրք ու պատասխանատվություն կրող մարդկանց։ Բուտրոս Ղալին բացառություն չէր։ Հակառակ այն մեծ հետաքրքրությանը, որ կար մեզ մոտ գլխավոր քարտուղարի այցի կապակցությամբ. բազմաթիվ չլուծված հարցերի կուտակում, շրջափակում, ճգնաժամ, բնականաբար, պահանջում էին, եթե ոչ կտրուկ և վերջնական, գոնե հստակ պատասխաններ։ Սպասումները չարդարացան։ Հանրապետություններից յուրաքանչյուրի մասին հրապարակավ ասված բնորոշումներն ավելի շատ խճճեցին հարցերը, քան պարզեցին։ Եվ, ով զարմանք՝ գալու հիմնական նպատակը հակամարտությունների վերացումն էր ու...։ ոչ մի խոսք Ղարաբաղի մասին։

Առաջին անգամ չէ, որ մենք լսում ենք միջազգային ատյանների կարծիքը մեր մասին։ Հայաստանը կարող է դառնալ դեպի շուկա գնալու, սեփականաշնորհման և կայունացման չափանիշ։ Եվ ոչ մի խոսք շրջափակման, էմբարգոյի, դժվարագույն, ծանր տասնամյակներից վերջ դնելու մասին։ Երբ սերբերը շրջափակել էին բոսնիական մահմեդականների որոշ տարածքներ և խանգարում էին մարդասիրական օգնությունը տեղ հասցնելուն, ՄԱԿ-ի խնդրանքով ՆԱՏՕ-ն ռմբահարելով, ճեղքեց շրջափակումը։ Իսկ մեր տարածքո՞ւմ. ևս քանի՞ տարի կարող է տևել Հայաստանի շրջափակումը թուրք-ազերիների կողմից և դեռ որքա՞ն ՄԱԿ-ն ու նրա մարմինները, Արևմուտքը, պետք է շարունակեն հիանալ ու «արցունք թափել» քաղցած, մրսած, խավարի մեջ տառապող հայերի տոկունության ու համբերության վրա։ Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ տվեց Բուտրոս Ղալիի այցելությունը...

Միայն թե ձմեռը մեղմ լինի։

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ 200-ԱՄՅԱԿԸ

ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքը կազմակերպեց գիտաժողով՝ նվիրված հայ մամուլի 200-ամյակին։ Երկու դար առաջ Հնդկաստանի Մադրաս քաղաքում լույս տեսավ «Ազդարարի» առաջին համարը, որը հիմք դրեց հայ մամուլի պատմությանը։ Երկու հարյուր տարվա ընթացքում հայ մամուլն անցավ փառավոր ուղի, ունեցավ բազմաթիվ պարբերաթերթեր և հավատարմորեն ծառայեց և շարունակում է ծառայել իր ժողովրդին։

Գիտաժողովում բացման խոսք ասաց ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ Գ. Բրուտյանը։ «Ազդարար» ամսագրի մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Մխիթարյանը։ Բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Շտիկյանի զեկուցումը նվիրված էր Մխիթարյանների պարբերական հրատարակություններին։ «Արևմտահայ մամուլի զարգացման շրջափուլերը» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր Ա. Խառատյանը, պատմական գիտությունների դոկտոր Խ. Բարսեղյանը զեկուցեց 20-րդ դարի հայ պարբերական մամուլի պատմության գլխավոր ուղենիշների մասին, իսկ բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Դալլաքյանը զեկուցեց «Սփյուռքահայ մամուլը հայապահպան ազդակ» թեմայով։

ԾԱՆՈԹԱՑԵՔ. ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ԼՐԱԳՐՈՂԸ

Նրա անունը Սեթ էր։ Սեթ Սամյան։ «Ազդարարում» տպագրված չափածո հոդվածներն ստորագրում էր «Բարեկամ», իսկ դրանց մուտքի խոսքերն ուղղված խմբագրին՝ «Ուրախակից» ծածկանուններով։ Ժամանակին, անշուշտ, ամսագրի թղթակցի ինքնությունը հայտնի է եղել խմբագրության շրջանակներում, բայց պաշտոնապես նրա անունը բացահայտվել է 1848 թ. «Ազգասեր Արարատյան» հանդեսում տպագրված նրա մահախոսականում։ Տարիներ առաջ մեր հոդվածներից մեկում այն սխալ վարկածն էինք հայտնել, թե «Ուրախակից», «Բարեկամ» ծածկանունով ստորագրել է Բ. Սոգինյանը (տես ՊԲՀ, 1969, № 4)։

«Բարեկամի» առաջին հոդվածը տպագրվել է «Ազդարարի» առաջին համարում, որում հրապարակված ծրագրային հոդվածները խոսում են Հարություն Շմավոնյանի խմբագրական աշխատանքի զարմանալի գործիմացության և նպատակասլացության մասին։ Այդ համարում խմբագրի առաջաբանից և «Բարեկամի» հոդվածից բացի տպագրվել են Շահամիր Շահամիրյանի նամակը՝ ուղղված Մադրասի անգլիացի բժիշկ Ջիմս Անդըրսանին, Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ Արղության կոնդակները, թարգմանական մի գրույց։

Շահամիրյանն իր նամակում պատասխանում էր անգլիացի բժշկի անցյալում տված այն հարցին, թե ովքեր են հայերը և ո՞րն է նրանց լեզուն։ Իր պատկառելի կենսափորձով, հարուստ գիտելիքներով ու Մադրասում ունեցած անբասիր հեղինակությամբ Շահամիրյանն անշուշտ գիտակցում էր այն պատասխանատվության մեծությունը, որով նա պետք է երևար հայ մշակույթի մի նոր ճյուղի, լրագրության էջերում։ Եվ նա ընտրել է խոսքն ընթերցողին հասցնելու ամենանպատակահարմար թեման և ասելիքի ձևը։ Ովքե՞ր են հայերը, ո՞րն է նրանց լեզուն և հայրենիքը— այս հարցերին Շահամիրյանը պատասխանում է ոչ այնքան անգլիացի բժշկի հարցասիրությունը բավարարելու համար, որքան գաղթահայության մեջ ազգային ինքնաճանաչության ոգին ամրապնդելու դիտավորությամբ;

Եվ այսպես, իմացեք, հայտարարում է նամակագիրը. Հին կտակարանում ասված է, որ Նոյը սերում է մեր նախահայր Ադամից։ Մինչ ջրհեղեղը դեռևս ողջ էր Ադամի թոռնորդին, որին տեսել է Նոյը և, բնականաբար, նրա հետ խոսել Ադամի լեզվով։ Ջրհեղեղից հետո իջնելով Արարատի գագաթից, նա իջած վայրն անվանել է Նախիջևան և այդ անունը, որ ստեղծվել է Նոյի, հետևապես Ադամի լեզվով, նրանց երկիրը Արարատյան աշխարհն է, որն իբրև ժառանգություն, Նոյը հանձնել է Հաբեթ որդուն։

Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ Արղության կոնդակները հնդկահայ գաղթօջախի հայությանը տեղյակ էին դարձնում Նոր-Նախիջևան և Գրիգորիուպոլիս քաղաքների հիմնադրման հետ կապված իրադարձություններին և Եկատերինա երկրորդ կայսրուհու կողմից այդ քաղաքների բնակիչներին տրված առանձնաշնորհներին։

«Ազդարարի» առաջին համարի ծրագրային նյութերին ներդաշնակում էր «Բարեկամի» ծավալուն բանաստեղծությունը, կամ որ ավելի ճիշտ կլիներ ասել, հրապարակախոսական հոդվածը՝ չափածո ձևի մեջ։ Այդ ձևը պահպանվում է լրագրողի գործունեության ամբողջ ընթացքում։ Նրա հոդվածները, որ շարունակաբար տպագրվել են ամսագրի առաջին 7 և 16-րդ համարներում, նվիրված են հնդկահայ գաղթօջախի հայությանը հուզող խնդիրներին, գրված՝ կիսագրաբար, կիսաաշխարհաբար, ընթերցողների բոլոր խավերին մատչելի հայերենով։ Առաջին համարի հոդվածը, որը հեղինակն անվանում է համեստ ընծա, շնորհավորական խոսք է, ասված Շմավոնյանի «ամենացանկալի» ծրագրի՝ ամսագրի հրատարակության առթիվ։ Այդ հոդվածը երկու բաժին ունի և հասցեագրված է ամսագրի ընթերցողներին, ապա և «Ազդարարին», որին սիրում է անձնավորել բանաստեղծը։

Ընթերցողներին ուղղած խոսքում «Բարեկամը» շտապում է հայտնել, որ նրանց դիմում է ոչ թե խրատելու, այլ աղաչելու նպատակադրումով։ Նա շնորհավորում է ընթերցողներին.

Ուրախացիր այսօր եղբայր,
Զի նոր ծնավ քեզ «Ազդարար»
Եւ աղաչեա առ Տէր սիրով,
Ծաղկեցուսցէ՝ սմա հանճարով։

Այնուհետև նրանց հիշեցնելով իմաստունների այն ասույթը, թե ամեն մեծ գործ փոքրից է սկսվում, խնդրում է ներողամիտ գտնվել ամսագրում նկատվելիք սխալների նկատմամբ և ջանալ օգնել խմբագրին։ Հանդիսավոր տոնական այս խոսքին հաջորդում են «Ազդարարին» ուղղված նրա խորհուրդները։ Ամսագրին բարեմաղթելով երկարակեցություն և Հայաստանում բունենելու երջանիկ բախտ, բանաստեղծը գործնական խորհուրդներ է տալիս նորածին ամսագրին, որոնք այսօր իսկ շարունակում են մնալ լրագրային գործի էական հատկանիշներից։ Առաջին խորհուրդն ամսագրին այն է, որ «Ազդարարն» ուսումնասիրի հարևան թերթերի աշխատանքի ոճը և սովորի դրանցից։

«Ազդարարը» պետք է լինի նախանձախույզ և աշխատասեր, ունկնդրի խրատներին, շարունակաբար գրական գործեր հրատարակելով ընթերցանության նյութ տա ազգի անդամներին և որ կարևորն է՝ լինի ճշմարտախոս («Լուրք հաւաստի և խրատական, է քեզ միայն վայելչական»)։

Ամսագրի երկրորդ համարում «Բարեկամը» պատմում է այն տպավորության մասին, որ թողել էր պարբերաթերթն ընթերցողների վրա։ Հետաքրքրական է անշուշտ այն փաստը, որ նա «Ազդարարի» լույս տեսնելուց հետո ամսագրի առաջին համարը տեսնում է շատերի ձեռքին» Այն կարդում են, ուրախանում, իսկ ոմանք նաև դժգոհում։ Նա առանձնապես վշտանում է անգլիախոս հայերից մեկի կարծիքից, որը թեև «Ոչ գիտե այլ ինչ,թե ոչ է, բի սի», բայց գտնում է, որ «Ազդարարի» նյութերը հնացած են։

Հետագա հոդվածներում նույնպես «Բարեկամը» շարունակում է խորհուրդներ տալ ամսագրին. «Ազդարար» անունը պարտավորեցնող է, այն հանրության պետն է և տեսուչը, և քանի որ նրա խնդիրն է անմիջականորեն խոսել մարդկանց հետ, ապա նա պարտավոր է քննել նրանց վարքը և դատապարտել նկատված արատները։

Տես զգուշութեամբ, զի
մանկունք ազգիս
Եւ պանդխտեցեալք յայսմ
քաղաքիս,
Վատնեն ժամանակ դատարկ
շրջելով,
Ի վերայ բախտի միշտ
բարբաջելով։
Եւ ասայ նոցա, պահել ի մըտի,
Զի այս կորստեան ոչ
համեմատի
Ոչ կորուստ ընչից, ոչ
ոսկեղենաց,
Զի կորուստըս այս, է՛
կորուստ կենաց։

Սեփական տան, Հայաստանի ազատագրության գաղափարը, հայրենի հողի վրա ազատ կյանք ստեղծելու բաղձանքը դարձյալ ու դարձյալ զբաղեցրել է «Բարեկամի» միտքը, նրա բանաստեղծական խոսքին տալով համազգային ակնկալիքներին համապատասխան հնչեղություն։ Այս իմաստով հետաքրքրական է նրա 6-րդ հոդված-բանաստեղծությունը, որում ներկայացվում է գաղութահայության փրկության ծրագիրը։ Այն, պետք է ենթադրել, մշակված էր Հ. Շմավոնյանի, թերևս նաև Թ. Սոգինյանի մասնակցությամբ։ Վկայակոչելով հնդկահայ վաճառականների վերջին տարիների անհաջողությունները Ֆիլիպիններում, Ինդոնեզիայում, Չինաստանում և այլուր, նա հայտնում է, որ եթե նախկինում հայերը մեկ հարյուրին հարյուր էին շահում, ապա այդ օրերին այնպիսի խոշոր կորուստներ ունեն, որ ասես, կամովին իրենց ունեցվածքը նետում են կրակի մեջ։ Ժամանակն է գիտակցել, որ օտար հողը չի կարող հայրենիք դառնալ, ուստի բանաստեղծը հանձնարարում է «Ազդարարին»՝ ասել հայերին, որ նրանք անտեղի են վատնում իրենց ունեցվածքը, որովհետև և՛ ժամանակներն են փոխվել, և՛ մարդիկ։ Նրանց պետք է տալ հետևյալ վճռական խորհուրդը.

Առեք զգանձ ձեր դուք ի
միաբան.
Գնացեք ինկուն աշխարհն
Հայաստան
Զի այն է ձեր տուն և ձեր է
միայն
Արժան է լինիլ և ձեր
գերեզման։

Հայրենիք գնալու համար, սակայն, նրանք պետք է նախ իրենց հողի տերը դառնան։ Նա համոզմունք է հայտնում, որ Հայաստանի ազատագրման գործը կիրականացնեն քրիստոնեական պետությունները և մատնանշում է այն միջոցները, որոնց պետք է դիմեն հայերը։ Նա միաժամանակ այդ հոդվածում ներկայացնում է երկրի բարեշինության, կրթական գործի ծավալման, գիտությունների, արհեստների և երկրագործության զարգացման մի ընդարձակ ծրագիր։

Արդեն 5-րդ համարում «Բարեկամը» խմբագրից թույլտվություն է խնդրում դադարեցնելու իր աշխատակցությունը ամսագրին։ Չնայած բերված պատճառաբանություններին, կարծում ենք, նրա հրաժարականը կապված էր խմբագրական աշխատանքում կատարված որոշ փոփոխությունների հետ։ Բանն այն էր, որ սկսած ամսագրի 5-րդ համարից, Շմավոնյանն սկսում է տպագրել Խաչատուր Ջուղայեցու «Պատմություն Պարսից» մեծածավալ աշխատությունը, իսկ 8-րդ համարից՝ նաև Հակոբ Այուբյանի «Հեյդարալի խանի պատմությունը» մեկը։ Երկու ծավալուն գործերի միաժամանակյա տպագրությունը Սեթ Սամյանին ինչ-որ չափով ազատում են բոլոր համարներին նյութեր տրամադրելու պարտավորությունից, և 8-րդ համարից արդեն «Բարեկամի» հոդվածները չեն երևում։ Նրա հրաժարականի կապակցությամբ Հարություն Շմավոնյանը հատուկ շնորհակալական խոսք է զետեղում ամսագրում։ «Ազդարարի» խմբագիրը նրան անվանում է «վսեմախոհ պատվական Ուրախակից», գնահատում ընթերցողների «հանդիմանողի և սաստողի», «գրգռողի և սփոփիչի» նրա ազնիվ դերը, ինչպես և դրվատում «իբրև պարզ հայելի, գեղեցկահարմար և տողաչափորեն» գրված նրա հոդվածները։

Ամսագրի 16-րդ համարում երևում է «Բարեկամի» վերջին հոդվածը։ Նա շոյված է խմբագրության ուշադրությունից, բայց չի կամենում գրել, որովհետև ինքը ևս քաղցածություն է զգում. դա հացի քաղց չէ, գրում է նա, «այլ սով է և քաղց միաբանութեան»։ «Բարեկամը» խորհուրդ է տալիս, որ հայերը կարդան Նոր-Նախիջևանում տպագրված Ֆենելոնի «Արկածք Թելեմաքա» փիլիսոփայական վեպը, որը թարգմանել էր Մարգար Զաքարյանը։ «Թելեմաքի քաղցըր բուրաստան այգին լի է ամեն տեսակ մրգերով», որոնք կհագեցնեն մարդկանց, գրում է նա։ Անշուշտ նա նկատի ուներ վերոհիշյալ վե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՅՆ ԿՈՂՄՈՒՄ՝ ՈՉԻՆՉ Է...



• Հաղորդագրությունն այն մասին, որ հացը կթանկանա տասն անգամ, բոլորիս մեջ առաջացրեց տագնապ։ Վատ լուրերին, «կյանքը մի քիչ էլ կվատանա» հայտարարություններին վարժվել ենք վաղուց, բայց այս մեկը... Տա՞սն անգամ...։

Հոկտեմբերի նախօրյակին համաշխարհային բանկի հետ բանակցություններից հետո մամուլում երևաց իշխանությունների հայտարարությունն այն մասին, որ միջազգային վալյուտային ֆոնդը մեզ պատրաստ է վարկ տրամադրել, եթե մենք ազատ արձակենք հացի գինը։ Այդ հաղորդագրություններում կային մեր իշխանությունների նկատմամբ հարգանք ու հավատ ներշնչող տողեր. «մենք պարզաբանել ենք վալյուտային ֆոնդին, որ հաշվի առնելով հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, չենք կարող միանգամից թանկացնել հացի գինը և այդ պետք է անել փուլ առ փուլ»։

Փուլերը երկար սպասեցնել չտվեցին։ Հենց մի քանի օր հետո հացը թանկացավ և դարձավ 6 դրամ։ Մենք հանգիստ ընդունեցինք այդ չհիմնավորված թանկացումը, այն համարելով հերթական, անխուսափելի քայլ։ Բայց ահա, նոր հաղորդագրություն՝ հացը դեկտեմբերի 1-ից կթանկանա 10 անգամ։ Այսինքն հօդս ցնդեցին մեր իշխանությունների խոստումները, թե նման բան պետք է կատարվի աստիճանաբար։ Իսկ ի՞նչ է՝ դեկտեմբերի 1-ին փոխվելու է հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, թե՞ «խեղդվելու ենք մենք առատության օվկիանոսում»։ Եվս մեկ հարց. մենք համաձայն չէինք հացի տասն անգամ թանկացման և այն բարձրացրինք 1,5 դրամով։ Հիմա համաձայնվել ենք տասնապատիկ թանկացմանը, բայց ո՞ր գնի համեմատ՝ 4,5 դրամի տասնապատիկը, թե՞ 6 դրամի։ Այսինքն՝ համաձայն չէինք 45 դրամի, հիմա համաձա՞յն ենք 60 դրամի։ Իսկ գուցե տասնապատիկ թանկացումը մնում է «շողշողուն հեռանկար», ու մինչև դեկտեմբերի 1-ը կլինեն էլի միջանկյալ թանկացումներ, ասենք՝ 7—8—10 դրամ և հետո՝ 10 անգա՞մ...

Հացի տասնապատիկ թանկացումն ահավոր հարված կլինի մտավորականությանը՝ գիտնականներին, բժիշկներին, մանկավարժներին, այսինքն՝ չքավոր խավին։ Այդ խավը կկանգնի ոչ թե ծանր, այլ անհուսալի վիճակի առաջ։ Աշխատավարձի 2—2,5 անգամ բարձրացման խոստումները չեն կարող փոխհատուցել հացի թանկացումը։ Թող ոչ ոք չապացուցի, թե հաց է, էլի՝ 350 գրամի համարժեքով կավելանան յուրաքանչյուրի օրվա ծախսերը։ Հացի թանկացումը, այն էլ՝ 10 անգամ, իր հետ կբերի շուկայի կտրուկ, անկանխատեսելի թանկացում։ Հացի հետ բնականաբար կթանկանան ալյուրը, հրուշակեղենը, ձավարեղենը, մակարոնը, կարկանդակն ու չգիտեմ էլի ինչ, որը կապ ունի հաց ու ցորենի հետ։ Դեկտեմբերյան շուկայում գները կբարձրանան այնպիսի տեմպերով, որ դրամի հաշվարկը կհիշեցնի վրացական կուպոնը։ Հայաստանից կսկսվի ձմեռային արտագաղթի նոր ալիքը։ Հանրապետությունը, որն արդեն պլանավորված հայաթափ է լինում, որի փողոցներից անհետանում են հիանալի երիտասարդները, որոնցով մենք հպարտանում էինք անցած տասնամյակներում և կտրուկ ավելացել են մուրացկանները, չարչիները, թափառաշրջիկներն ու գրպանահատները, շվարած, մոլորված մարդիկ, անկյանք հայացքներով թոշակառուներն ու հաշմանդամները, միտում ունի դառնալու քավարան՝ սեփական ժողովրդի համար։ Եթե, իրոք, աշխատավարձի բարձրացումը պետք է փոխհատուցի թանկացումը, ինչո՞ւ չհրաժարվել թանկացումից և աշխատավարձի բարձրացման համար նախատեսված գումարը տրամադրել հացի արտադրությանը՝ նրա գինը կայունացնելու համար։

Տարօրինակ բան է կատարվում. ասես մեկը (հիմա էլ միջազգային բանկը) դիտավորյալ անում է ամեն ինչ, կյանքը անտանելի դարձնելու համար։ Լինենք անկեղծ. շուկայական հարաբերությունները, ազատ ձեռներեցությունն ի՞նչ տվեց ժողովրդին, առայժմ՝ աղքատացում, հետո՝ ազատ ձեռներեցների անվան տակ ազատորեն գործեցին խաբեբաները։ Այն, ինչ կատարվում է մեր բանկային համակարգում, չկա նույնիսկ Աֆրիկայում կամ լատինաամերիկյան խամաճիկային հանրապետություններում։ Այդ ինչպե՞ս է, որ 1 որսորդական հրացանի մասին ահազանգ ուտանային ոստիկանությունը ունի ուժեր՝ ամբողջ թաղամասը շրջափակելու և խուզարկելու համար, իսկ պետական մարմիններում գրանցված, պետական շենքերում տարածքներ գրաված բանկերը, ժողովրդի վերջին կոպեկները քամելուց հետո, անպատիժ անհայտանում են և ոչ մի արձագանք, ոչ մի օպերատիվ միջամտություն։ Բայց չէ՞ որ դրանք պարզապես գողեր են, իսկ մեր բնակչությունը հացի տասնապատիկ թանկացումը կդիմավորի վերջին հույսերը կորցրած, երբ արտասահմանից (և ո՛չ սեփական պետությունից) օգնություն ստացած մի քանի դոլարը դրամի ու ռուբլու վերածած բանկ է դրել և տոկոսով հոգացել իր տարրական պահանջները։ Իսկ այսօր նրա համար լույսը բացվում է այդ մեկ հույսն էլ կորցնելու տխուր լույսով։

Խոստումները, նկարագրվող հեռանկարները, ազգային գիտակցության կոչերը, հայրենասիրական-ազգայնական կեցվածքը կարող են ժողովրդին ոգևորել, բայց կերակրել չեն կարող։ Այսօր մտավորականության սոցիալական անապահովությունը հասել է սահմանի, որից այն կողմ չկան երկիր, պետություն, հայրենիք, հող, ապագա հասկացությունները։ Այն կողմում՝ ոչինչ է։ Սթափվե՛ք, պարոններ, հայրենիքը միայն հին վանքերը, Սևանը, լեռներն ու դաշտերը չեն։ Հայրենիքն այդ ամենն է գումարած առաջին հերթին, առողջ, զվարթ, կենսախինդ ժողովուրդ։ Զրկանքներն ու կարիքը ևս պետք է լինեն մարդկային արժանապատվության սահմաններում։ Նորածին «սուպեր մարկետների», խաղատների, նորակառույց պալատների ֆոնի վրա աղքատ ժողովրդի հետագա աղքատացումը, անհասկանալի դաժանություն է, որը պետք է սրբագրվի։ Նահանջելու տեղ չկա, անհրաժեշտ է կանգ առնել, անհրաժեշտ է տնտեսական մեծ ծրագիր՝ ժողովրդի կենսական պահանջների կտրուկ բարելավման համար։



ԱԿՆԹԱՐԹ. Ռաֆայել ԻՍՐԱՅԵԼՅԱՆ։ Մեծատաղանդ ճարտարապետի մասին կարդացեք «Նպատակի» հաջորդ թվով։



Աբրահամ Կրետացի. «Պատմութիւն Անի քաղաքին»

(Սկիզբը՝ թիվ 18—19-ում)

Կրետացու մոտ կան նաև քաղաքի կենցաղին վերաբերող այլ մանրամասներ, որոնք թեև պարուրված են քննադատական խրատախոսությամբ, բայց, այնուամենայնիվ, նշանակալի են: Այսպիսով, Կրետացին օգտվել է Անիի իրականությանը իրազեկ սկզբնաղբյուրից, սակայն, կրկնենք, որ հեղինակի խնդիրը Անիի պատմության կամ անեցիների ավանդազրույցների շարադրումը չի եղել: Նա ստեղծել է բարոյախոսական երկ: Ուշագրավ է, որ իր խոսքին ներգործման ավելի մեծ ուժ հաղորդելու համար Կրետացին չի խուսափել նաև «Պատմության» մեջ հրաշագործություններ մուծելուց: Բայց հատկանշական է, որ նմանօրինակ երկու դեպքում անհավանական միջադեպեր պատկերելուց հետո, նա համանման դրվագ է նշում Աստվածաշընչում:

Հեղինակն ասես իր ոճից շեղվում է երկի վերջնամասում, ուր խոսելով անեցիների արտագաղթի մասին, միանգամայն որոշակի երթուղիներ ու տվյալներ է նշում: Այս հատվածը պատմագիտական արժեք ունի, թեև հաճախ կրկնում է ղրիմահայերի մեջ տարածված ու նրանց կողմից արձանագրված տեղեկությունները: Ինչպես երևում է, Կրետացին օգտվել է 1690 թ. Ղրիմում Դավիթ գրչի գրած ղրիմահայության պատմությանը նվիրված մեծարժեք հիշատակարանից, Մարտիրոս Ղրիմեցու 1672 թ. գրած «Պատմութիւն Ղրիմայ յերկրի» չափածո գործից, կամ այս երկուսի սկզբնաղբյուրից:

Ըստ Դավիթ գրչի՝ Անիից դուրս եկողները. «թողլով զոսկեզօծ պալատս և ծաղկաւէտ դաշտս, զվանորայս և զեկեղեցիս աւեր, չուեալ եկին որպես փախստական ի յԱխսարայ, որ է ի մէջ Հաշտերխանու և Ղազանու. ոմանք գնացին ի Ճուղայ, ոմանք ի Վան և այլք ի Սիս»:

Նույնն է պատմում Կրետացին՝ անեցիները «թողլով զքաղաքն և զեկեղեցիսն և զոսկեզօծ պալատսն և զծաղկաւէտ դաշտս իւրեանց, գնացին որպես փախստական, ճեղքեալ կէսքն ի Ճուղայ և կէսքն առ եզերս Կասպից ծովուն և ոմանք ի Վան և այլքն ի Սիս»:

Մարտիրոս Ղրիմեցին գրում է, որ անեցիները երկար չեն մնում մոնղոլների մոտ՝

«Եվ անդ ոչ ախորժեն մնալ սեփհական,
Զզուեալ դժնաքարու ազգաց հոնական,
Ապա դեսպան յղեն առ լատին իշխան,
Որ էր տէր Կաֆայու նախնի բերթին այն»:

Կրետացին գրեթե կրկնում է. «Եւ յետ ոչ բազում ամաց զզուեալ ի նետողաց դժնաբարոյ ազգացն՝ դեսպան յղեն ի Կաֆայ՝ առ լատին իշխանըն, որ էր ի մէջ բերդին»:

Սակայն Կրետացու մոտ կա մի տեղեկություն, որը չի հանդիպում այլ աղբյուրներում: Դա Կաֆայի Հայոց բերդապարսպի կառուցման թվականն է (ըստ հեղինակի, շինարարությունը տևել է քառասուն տարի, որից երեք տարի անց, թուրքերը գրավել են քաղաքը: Վերջին դեպքը տեղի է ունեցել 1475 թ., հետևաբար, պարիսպը կառուցվել է 1432—1472 թթ.): Կրետացու տեղեկությունը հաստատվում է հարակից տվյալներով և ընդունելի է համարվում:

Ինչպես վերը նշեցինք, մեր կարծիքով, Աբրահամ վարդապետը հենց Կաֆայում է իր գործը գրել, այդ պատճառով էլ Կաֆային ու տեղի հայությանն ավելի մեծ տեղ է հատկացրել:

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Ընդունված կարգի համաձայն, պետք է սկզբում անդրադառնայինք Կրետացու երկի վերաբերյալ գրականության մեջ առկա կարծիքներին, բայց մենք դա թողեցինք վերջում, քանի որ փոքրաթիվ լինելով հանդերձ, այդ գնահատականները հակասական են, երբեմն ոչ այնքան գրվածքին, որքան նրա պաշտպանած գաղափարախոսության քննադատությանը վերաբերող, ուստի ավելի նպատակահարմար էր դրանք վկայաբերել երկի բնույթին ու սկզբնաղբյուրներին ծանոթանալուց հետո:

Ն. Մառը «Անի» կոթողային աշխատության մեջ քաղաքի պատմագրական ակնարկը սկսում է հենց Կրետացու գործի հիշատակումով, գրելով՝ «Հատուկ Անի քաղաքի պատմություն հայերի մոտ սկսում է գրվել XVIII դարում: 1734 թվականից Հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացին առաջին անգամ կազմում է նման հատուկ պատմություն՝ տասնէջից: Հիմք կա պնդելու, որ Աբրահամ կաթողիկոսն իր տրամադրության տակ ուներ պատրաստի ավանդապատում՝ Անիի անկման մասին, որի մեջ կային նաև ինչ որ իրական տվյալներ, անիրական կյանքից. բայց նրա պատմությունը ստեղծագործություն է հոգեփրկչական ընթերցանության համար»: Ըստ Ն. Մառի, Կրետացին Անիի թեման է ընտրել, քանի որ ինքը Կաֆայից էր, որի հայ բնակիչները համարվում էին անեցիների հետնորդներ:

Ինչպես վերը նշեցինք, Կրետացին նպատակ չի ունեցել «հատուկ» Անիի պատմություն գրել, գործն ստեղծել է մինչև կաթողիկոս դառնալը, իսկ նրա՝ ծագումով կաֆայեցի լինելու մասին, որևէ տվյալ չըկա:

Թեև Կրետացու գրվածքը հայերեն մեկ անգամ է հրատարակվել (1870 թ.), բայց 1735 թ. նրա մի մասն իր գըրքում է զետեղել Ղազար Ջահկեցին (այն ժամանակ Զմյուռնիայի առաջնորդն էր, Կրետացուց հետո Հայոց կաթողիկոս դարձավ): Ղ. Ալիշանը վերցնելով այն, հրատարակել է «Հայապատումում», «Ավանդութիւն կործանման Անւոյ» խորագրով, կից որպես հեղինակ նշելով Ջահկեցուն: Իրականում վերջինս միայն բառացի կրկնել է Կրետացուն՝ Հովհաննես Պլուզի Անի գալու հատվածից մինչև քաղաքի գաղթականության Վան և Սիս գնալու հիշատակումը: (Եթե ենթադրենք, որ Ջահկեցին և Կրետացին օգտվել են նույն սկզբնաղբյուրից, ապա առաջինը բանաքաղության մեջ անհետևողական է գտնվել, քանի որ, օրինակ, երկու գրագիրների մասին հատվածը չի պատմում, բայց խոսում է Հովհաննես Պլուզի՝ առաջ դրված բարձր գրակալի մասին): Հակված ենք կարծելու, որ Ջահկեցու սկզբնաղբյուրը հենց Կրետացու երկն է եղել, որը և՛ ավելի վաղ է գրվել, և՛ ամբողջական է: Ջահկեցու բնաբանը ծանոթագրելով Ղ. Ալիշանը գրում է. «Թէև ռամկական զրոյց մի ըլլայ այս և յետին ժամանակի գրչէ մի յառաջ բերուած, որ է Ղազար կաթողիկոս ի կէս ԺԸ դարու, բայց նշմարուի, որ անծանօթ հնագունէ մնաց է...»: Այստեղից երևում է, որ Ալիշանը ծանոթ չի եղել Կրետացու հեղինակած գրվածքին, բայց երկի բնույթը ճիշտ է ներկայացնում, մի բան, որ չի կարելի ասել հետագա հեղինակներից ոմանց մասին: Օրինակ, Լեոն, իրեն հատուկ կրքով մեղադրում է «վարդապետներին», որոնք հնարել են այդ ավանդությունը, այսպանում «միջնադարյան խավարը» և այլն: Թ. Հակոբյանը ևս այն համարում է «հոգևորականների միջավայրում» հյուսված «հրաշապատում-ավանդություն»: Սակայն հատկանշական է, որ Կրետացու միջոցով մեզ հասած պատմությունը շատ տարածված է եղել անեցիների սերունդների մեջ, հասել անգամ լեհահայերին, այսինքն ժողովուրդը պահպանել է այդ ավանդությունը, հետևաբար՝ ունեցել դրա կարիքը ու գիտակցել նշանակությունը: Արդ, Կրետացու երկը պետք է ընդունել այնպես, ինչպիսին որ այն կա, առանց թերագնահատման և կամ գերագնահատման:

Ամփոփենք: Աբրահամ Կրետացու երկը թեև վերնագրված է «Պատմութիւն Անի քաղաքին», սակայն սովորական ըմբռնմամբ պատմություն չէ, այլ բարոյախոսական զրույց, որը հյուսված է երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի կործանման ու ամայացման փաստի շուրջ: Նյութի ընտրությունը պատահական չի եղել, քանի որ Կրետացին այն ներկայացրել է Կաֆայի հայությանը՝ այսինքն Անիից գաղթածների սերնդին: Հեղինակը նպատակ է ունեցել իր ժամանակակիցներին հեռու պահել հասարակական ամեն տեսակ արատներից ու մեղքերից, որոնք ծնվում են հարստությունից, ցոփությունից, անխոհեմությունից և առաջանում այնտեղ, ուր բարեպաշտությունն իր տեղը զիջում է ընչաքաղցությանն ու անբարիշտությանը: Ահա այս է եղել Կրետացու առաջ կանգնած խնդիրը, որը և լուծել է: Մնացած ամեն ինչ, այդ թվում պատմական իրադարձությունները, դեպքերն ու դեմքերը հեղինակի համար երկրորդական են և միայն միջոց՝ բուն նպատակին հասնելու համար:

Կրետացու երկը արժեքավոր է մի քանի առումով: Նախ, այն հանդիսանում է Անիի անկումը քրիստոնեական աշխարհայացքի տեսակետից՝ որպես գործված մեղքի հատուցում ներկայացնող յուրօրինակ ստեղծագործություն, և այդ մասին դեռևս XI դարում գոյություն ունեցած մտայնության առավելագույն զարգացումն է: Միաժամանակ, նրանում նկատվում են քաղաքի պատմության իրական դեպքերի հեռավոր արձագանքները:

Մյուս կողմից, ինչպես երևում է որոշ հատվածներից, հեղինակը ծանոթ է եղել անեցիների սերունդների միջավայրում պահպանված որոշ զրույցների ու ավանդույթների հետ, որոնք այս կամ այն չափով արտահայտվում են նրա երկում և կարող են օգտակար լինել քաղաքի պատմության (կենցաղի) ուսումնասիրությամբ զբաղվողների համար: Հետաքրքրություն է ներկայացնում նաև վերջին՝ Անիի գաղթականությանը և Կաֆայի պարսպաշինությանը նվիրված հատվածը:

Աբրահամ Կրետացու «Անի քաղաքի պատմությունը» հրատարակվել է շուրջ 120 տարի առաջ՝ գրաբարով և բընագրին է մատչելի եղել: Երկի աշխարհաբար թարգմանությունը համապատասխան ծանոթագրություններով հրատարակվել է մեր կողմից («Գարուն», 1992, № 9, էջ 84—87):

Կարեն ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

...ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑ ՆՐԱ ԲԱՐԻ ԱՆՈՒՆԸ

Գրիգորը, թեև ծնվել է Քարվանսարայում (Իջևան), սակայն սերվում է Բանանց գյուղի հանրածանոթ Ջաղեթյանների տոհմից: Նրա պապը՝ Մկրտիչը, կամ պալատա-որմնադիր Մակին, անցյալ դարավերջին դառնում է գավառի նշանավոր հարուստներից ու բարեգործներից մեկը: Նա օգնում է աղքատ և ընչազուրկ մարդկանց, նպաստում նորաստեղծ Ղազախ քաղաքի բարեկարգմանը, այստեղ հիմնում ժամատուն ու Սուրբ Վարդանանց եկեղեցին, հայկական դպրոց, հովանավորում կարիքավոր հայ ուսանողներին:

Գրիգորը Ալեքսանդրի 12 զավակներից երրորդն էր: Միջնակարգ կրթությունը նա ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որը ավարտելուց հետո, մեկնել է Գերմանիա և ընդունվել Լայպցիգի համալսարանը:

1909 թվականին համալսարանավարտ Գրիգորը վերադառնում է Թիֆլիս և ծառայության անցնում ֆինանսաբանկային հիմնարկներում:

1918 թվականի դեկտեմբերին նորաստեղծ անկախ Հայաստան է հրավիրվում արդեն բազմահմուտ ֆինանսիստի համբավ ունեցող Գրիգոր Ջաղեթյանը: Նա նշանակվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի օգնական, իսկ 1919 թվականի մայիսից մինչև օգոստոսի մեկը՝ վարում է ֆինանսների նախարարի պաշտոնը: Այս ժամանակաշրջանում, կառավարության որոշմամբ, արժեզրկված դրամանիշների փոխարեն նրա ստորագրությամբ շրջանառության մեջ են դրվում նոր դրամանիշներ՝ «ճախարակը», որը պետք է նպաստեր տնտեսության կայունացմանը: Ջաղեթյանը միջոցներ է ձեռնարկում ֆինանսական համակարգում բարեփոխումներ կատարելու համար, սակայն դաշնակցական կառավարության հետ ունեցած տարաձայնությունների հետևանքով հրաժարվում է նախարարի պաշտոնից և նույն թվականի հոկտեմբերին ընտրվում պետական վերահսկիչ:

1920 թվականին, Հայաստանի խորհրդայնացումից հետո, հեղկոմը Գրիգոր Ջաղեթյանին հաստատում է նույն պաշտոնում, որպես պետական վերահսկիչ, այնուհետև նա նշանակվում է ֆինանսների ժողկոմատի խորհրդի փոխնախագահ:

1921 թվականի փետրվարյան դեպքերից հետո, քաղաքական պայքարի արդյունքում Հայաստանում ստեղծվել էր մի քաոսային վիճակ, որտեղ մարդիկ չկարողանալով կողմնորոշվել և գլխավորը՝ համակերպվել, նպատակահարմար էին գտնում հեռանալ արտասահման: Դրանց թվում էր նաև ոչ մի կուսակցության չպատկանող Ջաղեթյանը:

1922 թվականի հուլիսին, Ալեքսանդր Մռավյանի հրավերով Ջաղեթյանը Թեհրանից վերադառնում է հայրենիք և նշանակվում պետբանկի Հայաստանի գրասենյակի կառավարիչ:

...Քայքայված, բզկտված, ավերված երկիրը ոտքի կանգնեցնելու համար պետք էր առաջին հերթին կարգավորել ֆինանսական վիճակը, ստեղծել գործող կայուն բանկավարկային համակարգ, վերափոխել արժեզրկված և արդեն իրեն սպառած հին ֆինանսավարկային հարաբերությունները, կազմակերպել գիտականորեն հիմնավորված նորը, նախապատրաստել համապատասխան կադրեր և այլ հարցեր, որոնք պետական մյուս համակարգերի հետ համատեղ պետք է նպաստեին Հայաստանի տնտեսության վերականգնման ու զարգացման ընդհանուր գործին:

Ինչ խոսք, փոքր չէր Գրիգոր Ջաղեթյանի ավանդն այս կարևոր գործում: Ամբողջությամբ նվիրվելով վստահված բնագավառի հարցերի մշակմանն ու իրագործմանը, օգտագործելով գիտելիքները, տասնամյակներում ձեռք բերած հարուստ փորձը, նա կարողանում է որոշակի բարեփոխումներ կատարել ֆինանսա-բանկային համակարգի գործունեության կատարելագործման ու կայունացման հարցերում: Դրան զուգընթաց, նա դասավանդում է համալսարանում և ինստիտուտներում, հանդես գալիս մասնագիտական դասախոսություններով և իր լուրջ ավանդը ներդնում կադրերի պատրաստման գործում: Հայաստանում վարկային ռեֆորմի իրականացման ժամանակ, 1931 թվականին, նա նախապատրաստում և լույս է ընծայում «Վարկային ռեֆորմ» համառոտ ձեռնարկը, որտեղ ուրվագծվում են ռեֆորմի հիմնական խնդիրներն ու անհրաժեշտ տեխնիկական ձևակերպումները: Այն շատ օգտակար ձեռնարկ էր տվյալ համակարգի բոլոր աշխատողների համար:

Ջաղեթյանը միաժամանակ զբաղվում է նաև գրական և թարգմանչական գործունեությամբ: 1934 թվականին գերմաներեն բնագրից նրա թարգմանությամբ լույս է տեսնում Ֆրիդրիխ Էնգելսի «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» և «Գերմանական գյուղացիական պատերազմը» աշխատությունները, Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի հատընտիր նամակների առաջին հատորը (1936 թ.) «Անտի Դյուրինգ»-ը: Միաժամանակ նա գրում է «Կապիտալիստական պետությունների ֆինանսները» աշխատությունը (1935 թ.):

Առանձնապես 30-ական թվականների սկզբներից ծայր առան այն հրեշավոր եղեռնագործությունները, որոնք հետագայում պետք է դառնային համապարփակ և չխնայեին ոչ մեկին:

Վերից գլորել էին դաժանության անիվը, որը թափ առնելով և ավելացնելով արագությունը, իր հարվածների տակ էր առնում նորանոր «խոշոր ու մանր խոչընդոտներ», որոնց կոչում էին արդեն «ժողովրդի թշնամի, գերմանական, ճապոնական լրտես, տրոցկիստ» և այլն, և այլն: Կարծես թե երկիրը լցվել էր «թշնամիներով», որոնցից նոր «ժողովրդական» հասարակարգը պաշտպանելու համար անհրաժեշտ էր դրանց մեկուսացնել կամ ոչնչացնել: Եվ այդպես ամեն օր, ամիսներ, տարիներ:

Ինչևէ. մոտ տասը տարի ծառայելով Հայաստանի ֆինանսների և պետբանկի համակարգում, 1931 թվականին Գրիգոր Ջաղեթյանը հիվանդության պատճառով թողնում է պաշտոնը և անցնում գրական-թարգմանչական աշխատանքի:

Քանի որ երեխաներն ապրում և սովորում էին Թիֆլիսում, երեսնական թվականներին Ջաղեթյանը նույնպես տեղափոխվում է Թիֆլիս՝ ընտանիքի մոտ: Մի փոքր հանգիստ առնելուց հետո, իրեն յուրահատուկ ջանասիրությամբ, նա ձեռնամուխ է լինում բնագրից Կարլ Մարքսի «Հավելյալ արժեքի տեսություն» մեծածավալ ու բարդ գրքի թարգմանության աշխատանքին: Սակայն...

—...1937 թվականի սեպտեմբերի 23-ին, գիշերվա ժամը երեքին հնչում է դռան զանգը,— պատմում է Գրիգորի դուստրը:— Կարծում էինք, թե դա մեր վաղեմի ծանոթն է, որը մեզ այցելում էր երբեմըն նույնիսկ գիշերվա ժամերին: Սակայն, երբ մոտենում եմ դռանը և հարցնում՝ ո՞վ է, պատասխանում են՝ դուռը բացեք, ՉԵԿԱՅԻՑ է: Հայրս մոտենում է և բացում դուռը. ներս են մտնում քաղաքացիական հագուստով երեք հոգի և կոպիտ կերպով հարցնում՝ սա՞ է Գրիգոր Ջաղեթյանի բնակարանը: Հայրս պատասխանում է, այո՛, ես եմ: Նրանք հայրիկին են ներկայացնում մի թուղթ և ասում, որ սա Երևանից ուղարկված ձեր ձերբակալման օրդերն է, ծանոթացե՛ք: Թեև ուշ գիշեր էր և դրսում մութ, մենք նկատեցինք, ներքևում, տան մոտ մի փոքրիկ մարդատար մեքենա է կանգնած, իսկ ստվերում ինչ-որ մեկը: Հայրիկին նստեցրին այդ մեքենան և տարան: Այդ օրից ի վեր, մենք այլևս նրան չտեսանք»:

Տեղափոխելով Երևան, Ջաղեթյանին մեկուսացնում են կալանատան մի փոքր խցում: Թե ինչո՞ւմ էին մեղադրում հայրիկին, կամ ի՞նչ էին ցանկանում իմանալ նրանից, ոչ ոքի հայտնի չէր ու ոչինչ չէին ասում:

Մեզ հասած կցկտուր տեղեկություններից իմացանք, որ հարցաքննության ընթացքում նրանք հայրիկին պարտադրել են ստորագրել կեղծ վկայություններ և ցուցմունքներ, որը նա հրաժարվել է կատարել»:

Անցնում է ժամանակը, իրար են հաջորդում ծանր ու դաժան տարիները, սակայն ոչ մի տեղից հուսադրող ոչ մի լուր, իսկ պատերազմի տարիներին այդ մասին խոսելն առավել ևս իզուր էր և ավելորդ: Մարդիկ մեծ հույսերով էին սպասում պատերազմի ավարտին, կարծելով, թե հաղթանակն ինչ որ բավարարում կբերի ժողովրդին: Ավաղ, իզուր հույսեր և սպասումներ:

Հարազատների բազում հարցում-դիմումներից հետո, վերջապես 1958 թվականին զինվորական դատախազությունից ստացվում է մի հակիրճ հաղորդում. «Գրիգոր Ալեքսանդրի Ջաղեթյանի վերաբերյալ գործը չեղյալ է համարված և դադարեցված, նա արդարացված է— ռեաբիլիտացված»:

Միայն այսքանը և ուրիշ ոչինչ:

Իսկ թե իրականում ինչ մեղադրանք է առաջադրվել Գրիգոր Ջաղեթյանին, մենք տեղյակ դարձանք ՀՀ ազգային անվտանգության պետական վարչության 1993 թվականի փետրվարի 24-ին, մեզ տրված գրությունից.

«Անցյալում Հայաստանի ֆինանսների մինիստրը կալանքի է վերցվել 1937 թվականի սեպտեմբերի 24-ին Հայկ. ՍՍՌ ՆԳԺԿ-ի պետանվտանգության վարչության կողմից: Գ. Ա. Ջաղեթյանը մեղադրվել է նրանում, որ ԻԲՐ 1918 թ. գերմանական գործակալ Կորգանովի կողմից հավաքագրվել է գերմանական հետախուզության մեջ ու գերմանական օկուպացիոն զորքերի հրամանատար գեներալ Ֆոն-Կրեսսի հանձնարարությամբ մասնակցել է հայ-գերմանական («Ֆերեյն») ընկերության կազմակերպմանը, հայ ինտելիգենցիայի շրջանում տարել է գերմանամետ փաշիստական պրոպագանդա, հավաքել է լրտեսական բնույթի տեղեկություններ և «Ֆերեյն» ընկերությանը կցված շտաբի ներկայացուցիչ, գերմանական հետախուզության գաղտնի ղեկավար (ռեզիդենտ) Ֆուֆանի միջոցով հաղորդել Ֆոն-Կրեսսի շտաբին: ԻԲՐ մինչև կալանավորման օրը սերտ կապ է պահպանել հակահեղափոխական ազգամոլական տարրերի հետ և հակասովետական աշխատանք կատարել:

Հայկական ՍՍՌ ՆԳԺԿ-ի Եռյակի 1938 թվ. հոկտեմբերի 4-ի վճռով Գ. Ա. Ջաղեթյանը դատապարտվել է պատժի առավելագույն չափի— գնդակահարության: Թաղման վայրը, ցավոք, պարզված չէ, անհայտ է»:

ՀՍՍՌ գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1958 թվ. հունիսի 20-ի որոշումով ԳՐԻԳՈՐ ԱԼԵՔՍԱՆԻ ՋԱՂԵԹՅԱՆԻ նկատմամբ ՀՍՍՌ ՆԳԺԿ Եռյակի 1938 թվ. հոկտեմբերի 4-ի վճիռը [illegible] նա ԱՐԴԱՐԱՑՎԵԼ Է:

ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՔԱՌՅԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Մեծն Կոմիտասի անունը կրող լարային այս քառյակը արդեն պատկառելի տարիքի է. ուղեկցել և ուղեկցում է մեր ժողովրդին՝ նրան նվիրելով բարձրարժեք երաժշտական գոհարներ:

Հոկտեմբերի 22-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահը հյուրընկալել էր մեր մշակույթի երախտավորներին, կոմիտասյան այս քառյակի արվեստի երկրպագուներին:

Պարզից էլ պարզ է, որ թեև դժվարին ու բարդ, մեր ժամանակը դեռ, այնուամենայնիվ, շնչում ու ապրում է արվեստով: Այդ երեկոն առանձնահատուկ էր նրանով, որ հնարավորություն ընձեռեց լսելու ոչ միայն ավանդական երաժշտություն, այլ նաև մեր արվեստագետների խոսքը, վերընթերցելու ապրած ու ապրված ժամանակի շունչը:

Նյութ ունեցողներից շատերը՝ Էդվարդ Միրզոյան, Տաթևիկ Սազանդարյան, Վազգեն Ավետիսյան, Տիգրան Մանսուրյան, Լևոն Մալխասյան, Երվանդ Երկանյան, Սվետլանա Նավասարդյան և ուրիշներ, այսօր իրենց վաստակն են փոխանցում նոր սերնդի երաժըշտական կրթությանը, իրենց նվիրումը՝ մեր արվեստին ու նաև պատկառանքը՝ մեծ երախտավորների հանդեպ:

Ավետ Գաբրիելյան, Սարգիս Ասլամազյան... Ասլամազյան ազգանունն անբաժան է Կոմիտասից: Իսկ Ավետ Գաբրիելյանն իր անունով ու հեռատեսությամբ ավետեց ու կանգնեց այս հիրավի ազգապահպան մեծ գործի դժվարին ճանապարհի ակունքներին ու անկրկնելի ջութակահարի իր մոգական հմայքով քառյակը հասցրեց համաշխարհային մակարդակի ու ճանաչման:

Խոսվեց նաև սերնդափոխության ու նրա մանկավարժական անգնահատելի վաստակի մասին: Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանն անդրադարձավ իր պատանեկան հուշերին. «1955 թվական... տասնյոթ տարեկան էի և ուսանում էի Վիեննայում: Հայտագրում կարդացի Կոմիտասի անվան լարային քառյակի հյուրախաղերի մասին: Ամբողջ գիշեր Աստված էի կանչում, որ օգնի Երևանից ժամանած իմ հայրենակիցներին՝ Վիեննայում պատվով ներկայացնել հայ արվեստը: Համերգի ժամանակ տեսնում էի Ավետ Գաբրիելյանի քրտինքի կաթիլները, որ իջնում էին ջութակի լարերին: Այդ դժվար մաքառումով նրանք հոյակապ արվեստ ներկայացրին, և հաջորդ օրը թերթերը Վիեննայում գրեցին՝ «այս չորս հայերից պետք է սովորել, թե ինչպես պետք է Շուբերտ նվագել»:

Համբավավոր և մեծավաստակ 70-ամյա և միշտ երիտասարդ Կոմիտասի անվան քառյակը հնչեցրեց Կոմիտասի «Գարուն ա», «Շողեր ջան», «Կռունկ» ստեղծագործությունները: Հավաստեց, որ կատարելության են հասել պրոֆեսոր, միջազգային մրցույթների դափնեկիր Էդվարդ Թադևոսյանը (առաջին ջութակ), պրոֆեսոր Սուրեն Հախնազարյանը, Ալեքսանդր Կոստինյանը և Ֆելիքս Սիմոնյանը:

Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» տողերը, ասմունքող Սվետլանա Խանումյանի ընթերցմամբ, լրացրին այս երեկոյի կոմիտասյան ոգին, որը հարատևում է մեր ժողովրդի հետ:

Կարինե ՍԱՄՎԵԼՅԱՆ

ԱԿՆԹԱՐԹ. Պարույր ՍԵՎԱԿ:

Իմիջիայլոց

ԼԱՎ ՍՆՎԵԼՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

Գերմանիայի կառավարության տվյալներով, արևմտյան գերմանացիները 2—3 տարի ավելի են ապրում, քան երկրի արևելյան հատվածի բնակիչները:

Միշտ նման տարբերություն կա նաև գերմանական հասարակության «բարձր» և «ցածր» խավերի կյանքի տևողության հարցում:

Գերմանիայում մահացության հիմնական պատճառները սիրտ-անոթային հիվանդություններն են (51 տոկոս): Ապա հետևում են օնկոլոգիական (24), շնչառական օրգանների և մարսողության (11) հիվանդությունները:

Կառավարական զեկուցագրում ուշադրություն է հրավիրվում գերմանացիների մեջ լայն տարածում ստացած որկրամոլության վրա: Գերմանիայի բնակչության 12 տոկոսը գերավելցուկային քաշ ունի, իսկ կանանց մեկ երրորդը և տղամարդկանց գրեթե կեսը պարզապես ավելցուկային կշիռ ունեն: Քաշի ավելցուկով հիմնականում տառապում են 45—64 տարեկան տղամարդիկ:

Ահա սրանք են լավ սնվելու վնասները: Երևի պետք է հատուկ շնորհակալություն հայտնել մեր բարեխնամ իշխանություններին, որոնց ջանքերով, մենք՝ հայերս, խսպառ ազատվել ենք գիրանալու հոգսից և, հավանական է, դարձել ենք գերերկարակյացներ...



Լեւոն ԶԵՔԻՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ

ՀԱՅԵՐԸ ՎԵՆԵՏԻԿԻՆ ՄԵՋ

Վենետիկի հետ հայերու առաջին յարաբերութիւնները կը կորսուին՝ քաղաքին ծագումի շրջաններուն մթութեան մէջ: Վիճուած աւանդութիւն մը Ռաւեննայի առաջին Էքսարքին՝ Հայկազն Ներսէս Պատրիկի (541—568) կը վերագրէ Վենետիկի մէջ երկու հռչակաւոր եկեղեցիներու կառուցումը, մին նուիրուած՝ Ս. Թէոդորոսի եւ միւսը՝ Ս. Գեմինիանոսի եւ Ս. Մենասի: Դար մը ետք՝ ունինք ստոյգ վկայութիւն մը Թորչելոյի բազիլիկայի նախնական շէնքին նըկատմամբ, զոր կերտած է ուրիշ հայազգի Էքսարք մը, Սահակ Պատրիկ (625—644) ինչպէս կը կարդանք իր կողմէ 631-ին քանդակուած մարմարեայ արձանագրութեան վըրայ:

Ժամանակի աղջամուղջը թանձր քող մը կը սփռէ, դժբախտաբար, կանուխ Միջին դարու այս եւ յաջորդ շրջաններուն վրայ, մինչեւ որ Կիլիկեան թագաւորութեան աւելի յստակօրէն վաւերագրուած ժամանակները կը հասնինք: Վենետիկ նախընտրուած զուգակիցն է այս փոքրիկ, բայց իր ժամանակներուն համար նշանակալից թագաւորութեան, որ իր նոյն առեւտուրով Հեռաւոր Արեւելքի ճամբաները կը բանէր: Արեւմտեան պետութեան մը շնորհուած առեւտրական առանձնաշնորհութիւններու՝ մեզ հասած ամէնէն նախնական վաւերագիրներէն մէկը, 1201-ի դեկտեմբեր ամսէն, ճիշտ վենետիկցիներուն կը վերաբերի: Վենետիկ, իր կարգին, չի յամենար փոխադարձելու իրեն ընձեռուած ընդարձակ մենաշնորհները, եւ հայերը՝ միեւնոյն դարուն առաջին կէսին՝ ունին արդէն իրենց սեփական տունը Վենետիկի մէջ, նուիրուած՝ Մարքոյ Ծիրանի Տօժէն:

1348-ին, առաջին անգամ կը հանդիպինք «Հայ եղբայրներ» ու Ս. Յովհաննէս Մկրտիչին ընծայուած եկեղեցիին եւ վանքին՝ Քաոթելլոյ թաղամասին մէջ:

1434-էն է առաջին յիշատակութիւնը Ս. Խաչ եկեղեցիին, Լանթեռնաներու ուղիին վրայ, որ յետոյ կոչուած է հայերու ուղի՝ «Քալլէ տէի Արմէնի», ինչպէս կը ճանչցուի նաեւ մինչեւ այսօր: Եկեղեցին զանազան անգամներով նորոգուած է եւ ընդարձակուած՝ 1496, 1510—1520, 1689 թուականներուն: Միջին դարուն Իտալիոյ զանազան կողմերը ցրուած աւելի քան քառասնեակ մը եկեղեցիներուն միջեւ՝ ասիկա միակն է, որ տակաւին հայերու ձեռքն է եւ ուր հայ ծէսով պաշտամունք կը կատարուի: Եկեղեցին, որ ներկայիս նորոգութեան ենթակայ է, կը պատկանի Մխիթարեան միաբանութեան:

Վենետիկի մէջ հայերն ունէին նաեւ իրենց սեփական գերեզմանատունը, որ կը գտնուէր Ս. Գէորգ, «Սան Ծորճոյ» կղզիին մէջ: Ժ. Զ. դարու վերջերը, ներկայ հոյակապ տաճարի կառուցման ընթացքին, գերեզմանատունը ծածկուած է անոր հիմերուն տակ: Վերջերս կատարուած նորոգութիւններն ու պեղումները երեւան բերին 1570 թուականէն հայերէն արձանագրութեամբ տապանաքար մը, որ կը պահուի տաճարին աջակողմեան՝ մեռելներու մատուռ, «Քաբբելլա տէի մորթի» կոչուած մատրան մուտքին:

Վենետիկի հայ հասարակութիւնը իր ամէնէն փայլուն օրերը ապրեցաւ ԺԶ—ԺԸ դարերուն, յատկապէս Հին ու Նոր Ջուղայի վարպետ վաճառականներուն կենսունակ գործունէութեամբ: Այնպիսի ժամանակի մը մէջ, երբ Վենետիկի հարստութիւնը վայրէջքի զուգադիրը կը բոլորէր՝ աշխարհի վաճառքի հրապարակներուն վրայ, հասարակապետութիւնը՝ հայերու առեւտուրին մէջ գլխաւոր նեցուկը կը նշմարէր իր խախտող տնտեսականութեան: Մանաւանդ թէ, Կրետէի պատերազմի դըժուարին տարիներուն (1645—1669), «Սերենիսսիմա» մասնաւոր միջոցներ ձեռք կառնէր «որպէսզի հայերու առեւտուրը, որ կարելի է ըսել թէ, միակն է քաղաքի ներկայ պայմաններուն մէջ, կարենայ աւելի ծաղկիլ, եւ անոնք կարենան պատրաստ օժանդակութիւն գտնել»:

Միեւնոյն դարերուն՝ Վենետիկ հայկական տպագրութեան ալ ամէնէն կարեւոր կեդրոններէն մէկը կդառնայ: Մանաւանդ թէ ճիշտ Վենետիկի մէջ լոյս կը տեսնէ, 1509-ին, հայերէն առաջին տպագիր մատեանը՝ Յակոբ Մեղապարտի ձեռքով: Անկէ ետք 19 հրատարակիչներ պիտի յաջորդեն իրարու՝ մինչեւ Ս. Ղազարի կղզեակին մէջ Մխիթարեան հայրերու տպարանին հիմնարկումը, որ տեղի կունենայ 1789-ին, մինչ նախապէս Մխիթար եւ աշակերտները՝ իրենց գիրքերուն տպագրութիւնը կը հոգային քաղաքին զանազան տպարաններուն մէջ: Արդարեւ, 1715-ին Վենետիկ կը հասնի Մխիթար Աբբահայր Սեբաստացին՝ իր 19 հետեւորդներով: Երկու տարի վերջ կը հաստատուի Ս. Ղազար կղզին, զոր վենետիկեան հասարակապետութենէն մշտնջենական նուէր կընդունի եւ որ օրուան պիտի հանդիսանայ ԺԸ դարու հայ վերածնունդին: 1836-ին Միաբանութիւնը կը հիմնէ Վենետիկի մէջ Ռափայէլեան վարժարանը, յետագային Մուրատ-Ռափայէլեան, որ նախ «Քա Փեզարոյ» պալատին մէջ հաստատուած՝ մեծ ջրանցքի երկայնքին՝ 1850-ին «Քա Ծենոպիոյ» պալատը պիտի փոխադրուի, ուր կգործէ մինչեւ այսօր: Ծանօթ է Մուրատ-Ռափայէլեան վարժարանի խոշոր դերը հայ մշակոյթի պատմութեան մէջ, ուր հասած է մեր Զարթօնքի սերունդին, յատկապէս արեւմտահայութեան, ընտրանիին կարեւոր մէկ մասը:

Վենետիկի հայ հասարակութիւնը, սակայն, մասնաւորապէս տնտեսական եւ առեւտրական գետնի վրայ, ուշադրութեան արժանի գործունէութիւն մը ունեցած է նաեւ գիտարուեստի եւ մշակոյթի բնագաւառներուն մէջ: Յիշենք Անտոն Սուրեանը, կոչուած նաեւ Հայ Անտոն, բազմակողմանի տաղանդով օժտուած: 1575-ի ուժեղ համաճարակի ընթացքին, իր հնարած մէկ դեղով բուժած է քաղաքացիներու հոծ թիւ մը, մանաւանդ թէ, գաղափարապաշտ հոգի, իր սեփականէն ծախսած է յաճախ՝ առանց փոխարէնի ակնկալութեան: Նոյն Սուրեանը հնարած է նաեւ մեքենայ մը, որով յաջողած է Զինարանին, «Արսենալե»-ի, յատակէն դուրս քաշել սուզուած խոշոր մարտանաւեր եւ մաքրել լճակին խորը բազմաթիւ դարերու մնացորդներէ: Բայց Սուրեանի տաղանդին մեծագոյն արժանիքը կայացած է Լեփանթոյի յաղթանակին բերած իր նշեալ նպաստին մէջ: Սուրեան պատրաստած էր նոր եւ սովորականէն աւելի զօրաւոր թնդանօթներ, որոնք կհասնէին թշնամի բանակին՝ առանց ենթարկուելու անոր կրակի տարողութեան: Այս եղած է գաղտնիքը՝ քրիստոնեայ ուժերու յաղթանակին: Պատերազմի ասպարէզին վրայ ալ՝ Սուրեան ցոյց տուած է իր ճարտարութիւնը, խիզախ նորոգելով փըրարուած հսկայ մարտանաւ մը, որ առանց իր միջամտութեան դատապարտուած էր ընկղմելու:

Յիշատակութեան արժանի ուրիշ տիպար մըն է Զաքարիա Թեհրիման կամ Թեհրիմանեան (1708—1784), եկեղեցական մը, ջուղայեցի մեծահարուստ Թեհրիմանեան գերդաստանէն, որոնք 1600-ի վերջերը Վենետիկ հաստատուած էին եւ, 1700-ի ընթացքին Եւրոպայի ամէնէն բաղձացուած առեւտրական հաստատութիւններէն մէկուն տէրն էին: Զաքարիա, մասամբ մոռացուած դէմք մը արժէքաւորուեցաւ անգլիական գրադատութեան կողմէ, որ կը տեսնէ անոր մէջ Վենետիկեան Լուսաւորութեան շարժումին ամէնէն հետաքրքրական եւ 1700-ի Վենետիկեան Ընկերութեան ամէնէն սրաթափանց դիտողներէն մէկը: Յիշենք նաեւ Վիկտորիա Աղանուր բանաստեղծուհին, որ սնած ու մեծացած է Վենետիկի մէջ: Ժամանակի նշանաւոր քերթողներէն Ծանելլայի աշակերտած եւ ընկերային կեանքի ակնառու տիպար մը՝ ԺԹ դարէն քսաներորդի անցքին վրայ, Աղանուրը կարելի է նկատել լաւերէն մէկը այդ շրջանի բազմաթիւ կրտսեր դէմքերէն:

Վենետիկի հայկական յուշերուն միջեւ կարելի չէ գանց ընել Կատարինէ Քոռնարոյի թագուհիին փառահեղ դամբանը՝ Ռիալթոյի մօտ «Սան Սալվատոր» եկեղեցիին մէջ, լատիներէն արձանագրութեամբ մը՝ որ զինք կը կոչէ «Թագուհի Կիպրոսի, Հայաստանի եւ Երուսաղէմի»: Ան Լուսինեան հարստութեան խնամացած այս վենետիկցի իշխանուհին կը կրէ տակաւին «Հայաստանի թագուհի» տիտղոսն ալ, հոգ թէ արդէն շատոնց նսեմացած ըլլար Կիլիկեան գահին փառքը:

Յիշենք հուսկ Ս. Մարկոսի հեքիաթային ձիերը, որոնք, աւանդութեան մը համաձայն, նուէր բերուած Հռոմի Ներոն կայսեր Հայ Տրդատ Ա. թագաւորին կողմէ, կարծես՝ միջոցին մէջ պայծառ յաւերժական վկաներն ըլլան Հայ-Վենետիկ մեծագոյն ուսումնասէրին՝ Ալիշանի պատգամին. «Ո՞վ պիտի համարձակի ըսել թէ մեռաւ Վենետիկ, երբ կորսնցուց իր անկախութիւնը: Նոյնը պիտի ըսեմ նաեւ Հայաստանի համար»:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԻ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

ԱՅԴԻՆ ՄՈՐԻԿԵԱՆԻՆ

Ձեր թերթի նոյեմբերի 8-ի համարում տպագրված «Նպատակս տկարություն չի ճանչնար» հոդվածն ինձ համար անակնկալ չէր. Սողոմոնյանի տիկինը հեռախոսով ասել էր, որ «պատրաստվում ենք պատասխանել»: Մտածում էի, թե այդ որ թերթը պետք է հանդես գա մեկ այլ թերթի դեմ՝ առանց պարզելու և ստուգելու հանգամանքները: Չսխալվեցի՝ «Հայաստանի Հանրապետությունը»: «Նպատակ» թերթում տպագրված «Ում է ժպտում... շուկան» հոդվածն ու նրա արձագանքները, որոնք միայն և միայն մեր թերթի գործն են և կարիք չունեն այլ «դատավորների ու փաստաբանների», հետապնդում են մի նպատակ. մեր ծանր օրերում մտավորականությանը հեռու պահել կեղտից, կեղծիքից, անբարոյականությունից, պաշտպանել հասարակ մարդու արդար վաստակը, հեղինակային իրավունքը: Հանդես գալով այդ ամենի դեմ (թողնենք փաստերի ճշմարտացիությունը, չէ՞ որ դուք էլ չեք անդրադարձել դրանց), դուք, փաստորեն, պաշտպանում եք կեղտը, կեղծիքը, անբարոյականությունը, հանդես եք գալիս մարդու վաստակի, հեղինակային իրավունքի դեմ: Վճիռը թողնենք ընթերցողին և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին, ում անունից դուք հրատարակվում եք:

Ես չեմ անդրադառնա ձեր հրապարակման մանրամասներին. չափից ավելի պարզունակ ու անհեթեթ են փաստարկները, խուսանավող բացատրությունները: Բայց պարզ է մի բան. դուք, պարոն Այդին, առիթը բաց չեք թողնում, օգտագործելով ձեր թերթը որպես մահակ, որպես գլավլիտ, որպես նոր «կարմիր կոմիսար», ուրիշներին «կարգի հրավիրելու», ամբաստանելու, պախարակելու համար: Ձեզ թվում է, թե ընթերցողը չի նկատի կամ չի հասկանա, որ «Նպատակս տկարություն չի ճանչնար», տիկին Սոնայի երկնած խորագրով, Շ. Գրիգորյանի հեղինակած և Ռ. Սողոմոնյանի ստորագրությամբ հոդվածի նպատակը «Նպատակը» չէ, այլ նրա գլխավոր խմբագիրը, որին, պարզվում է, մինչև օրս չեք հասցրել մրոտել: Ես ըմբռնումով եմ մոտենում ձեր ջանքերին. մեր թերթը վերջին շրջանում մի քիչ (նորից եմ նշում՝ մի քիչ) ավելի ակտիվացել է, անդրադառնում է ժողովրդի, հատկապես մտավորականության ծանր վիճակին, սոցիալ-քաղաքական հարցերին և ձեր թերթը չէր կարող մի դույլ «սառը ջուր չլցնել մեր գլխին»: Մի՞թե պատվեր եք կատարում և ո՞ւմ եք ծառայում պրն Այդին. ինչպե՞ս կարող է լրագրողի կոչում ունեցող մարդն այդքան չարությամբ լցված լինել ամեն մի ազատ մտքի, ժողովրդի շահի, արդարության նկատմամբ:

Դուք, որ ձեր էջերում հորդորում եք, թե «ժուռնալիստի առաջին քայլ-պարտականությունն է լսել, անպայման խոսել քննադատվողի հետ», ինքներդ խոսեցի՞ք, լսեցի՞ք մեզ, երբ ձեր էջը տրամադրեցիք ՀՀ ԳԱԱ պաշտոնաթերթին «քննադատելու»:

Թողնենք խղճի հարցը (այն կրթությամբ ձեռք չի բերվում), բայց գոնե որպես ՀՀ ԳԽ պաշտոնաթերթի խմբագրապետ, պարտավոր էիք հարգել օրենքը և հանդես չգալ մի հարցի մասին, որը դատական ատյանում ընթացքի մեջ է, իսկ ձեր պաշտպանյալները չեն բարեհաճում ներկայանալ դատարան, մտածելով, որ դեռ բավարար չեն դատարանի վրա «ճնշող մեխանիզմները»: Քի՞չ են ձեր հասցեին խորհրդարանային ամբիոնից հնչած ցասումնալից ելույթներն ու գնահատականները, հիմա էլ ուզո՞ւմ եք վաստակել ձեր գործընկերների զայրույթը:

Ամեն թերթ ունի հեղինակների իր շրջանակը, սնվում է իր առուներից: Առուները լինում են զուլալ, պարզ, երբեմն պղտոր (այդպես էլ կարող է պատահել): Մի՞թե ձեզ սնող առուները միայն պղտոր են: Իզուր չէ ժողովուրդն ասում. երբ մարդ կորցնում է ամոթը, կորցնում է ամեն ինչ: Ափսոս, չէ՞ որ ի վերջո մենք գործընկերներ ենք:

Հարգանքներով՝ Վլադիմիր **ՄՈՒՐԱԴՅԱՆ**

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԲԱՑԱՌՎՈՒՄ Է

Ինչպես նոյեմբերի 1-ին հաղորդել է «Ռոյթեր» գործակալությունը, Ռուսաստանը, ցանկանալով նավթի արտահանումն իրագործել Նովոռոսիյսկի նավահանգստից, համաձայնություն չի տա Թուրքիայի տարածքով նոր նավթամուղի կառուցմանը:

Այս մասին հաղորդել է Ռուսաստանի վառելիքի և էներգետիկայի նախարար Յուրի Շաֆրաննիկը՝ Մոսկվայում Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Խարար Վեյսել Աթասոյի հետ հանդիպումից հետո:

Թուրքիան մտահոգված է Բոսֆորի նեղուցով խոշոր բեռնատար նավերի անցման խնդրով և այդ պատճառով ցանկանում է, որպեսզի իր տարածքով նոր նավթամուղներ կառուցվեն՝ Ռուսաստանից և Ղազախստանից ու Ադրբեջանի նորաբաց նավթահանքերից նավթ արտահանելու համար:

Ռուսական ծրագրի համաձայն, նավթամուղը, անցնելով Ռուսաստանի տարածքով, Նովոռոսիյսկի նավահանգստից պետք է փոխադրվի Բուլղարիայի Բուրգաս նավահանգիստ, այնուհետև՝ Հունաստանի միջերկրածովյան Ալեքսանդրապոլիս քաղաքը, շրջանցելով Բոսֆորի նեղուցը:

Յու. Շաֆրաննիկը նաև նշել է, որ Թուրքիայի հետ իրենց տարաձայնությունները լուծելի են և թուրքական ֆիրմաներին հրավիրել է մասնակցելու ռուսական նախագծերին:

ՏԵՍԱԿԵՏ

ՎԱՀԱԳՆ ԱՍՏԾՈ ԵՎՍ ՄԵԿ ՄԵՀՅԱՆԱՏԵՂԻ

(ՎԱՐԿԱԾ, ՈՐ ԼԻ Է ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՈՒՍՏ ՓԱՍՏԱՐԿՆԵՐՈՎ)

Հայկական Սովետական Հանրագիտարանի 11-րդ հատորից տեղեկանում ենք, որ հին հայկական դիցաբանության մեջ Հայոց բարձր լեռները (Արագած, Արեգունի, Մասիս, Վարագ, Քարքե և այլն) դիտվել են իբրև Վահագնի երկրային սրբազան կայաններ: Ըստ հայ պատմագիր Զենոբ Գլակի, Վահագնի գլխավոր տաճարը կամ մեհյանը եղել է Տարոն գավառի Վիշապ քաղաքավանի մերձակա Քարքե լեռան լանջին: Պատմիչ Թովմա Արծրունին Վահագնին նվիրված տաճարներից մեկը հիշատակում է Փոքր Աղբակ գավառում, մյուսը՝ Տոսպում (Ախլականա գյուղի մոտ): Ասվածից հետևում է, որ Հայոց գավառների մեծ մասում գոյություն են ունեցել Վահագն աստծուն նվիրված բազում մեհյաններ: Եթե հաշվի առնենք, որ Սյունյաց աշխարհի լեռների, ձորերի, գյուղերի և այլ վայրերի պատմական և ժամանակակից անունների զգալի մասը (մի քանի տասնյակից ավելի. տես՝ Ս. Ումառյանի «Սյունիքի դիցարան» գիրքը) ուղղակի համընկնում է միջին արևելքի ժողովուրդների աստվածների անունների հետ, ապա մեր Վահագն աստծո անունով կոչվող լեռնագագաթը և նրա մեհյանատեղին առավել ևս պետք է փնտրենք այդ տարածքում: Հակված ենք ենթադրելու, որ հետագա դարերում տեղի ունեցած տեղանունների անվանափոխումները կամ թարգմանությունները պատճառ են դարձել, որ այսօր Սյունիքի քարտեզում, միջին արևելքի ժողովուրդների հզոր աստվածների՝ Հայկի, Արամազդի, Բագիի, Բելի, Ծվինիի, Կյուրոսի և այլոց անունների կողքին բացակայում է հայոց ամենազոր աստծո՝ Վահագնի անունը կրող սրբավայրը:

Ստորև մեջբերելով որոշ ուղղակի և անուղղակի փաստարկներ, վերցված մեր պատմիչների հիշատակումներից և Սյունյաց աշխարհի որոշ մեհյանատեղի, առայսօր գոյատևած կառույցներին վերաբերող առասպելապատումներից, փորձենք Սյունիքում վերագտնել Վահագն աստծո երկրային սրբազան վայրը:

Արարչության մասին մեր հին ձեռագրերից մեկում ուղղակի հավաստվում է, որ անցյալում հայերը «զԱրեգակն պաշտեցին և Վահագն կոչեցին»: Այնպես որ, առասպելապատումների մեջ ևս Վահագնը արեգակնային աստված է, պատերազմի, քաջության, չար ուժերի դեմ պայքարող մի այր: Այժմ տեսնենք, թե Սյունիքի ժողովուրդը որտեղ կտեղավորեր Վահագնի երկրային սրբազան կայանը: Ինչպես հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը «Պատմութիւն Սիսական» գըրքում, Սյունիքի վարչատնտեսական, քաղաքական կենտրոնը եղել է Շաղատի բերդաքաղաք-ամրոցը: Այս տարածքի համար արևածագը միշտ սկսվում է այսպես կոչվող Իշխանասարի («Իշեղլուի») գագաթից և մերձակա լանջերից: Այնպես որ, եթե Սյունիքի ժողովուրդը արևակերպ Վահագնի համար ծիսակատարումների սրբազան տաճար կառուցեր, պետք է որ այն տեղաբաշխված լիներ արևածագի լեռան գագաթին կամ լանջերին: Շաղատ բերդաքաղաքից այդպիսի իշխող դիրք է գրավում միայն «Իշեղլու» լեռնագագաթը:

Այժմ փորձենք պարզել, թե այդ ինչպես շաղատցիների համար արևածագի լեռնագագաթը կամ ըստ մեր կարծիքի, Վահագնի լեռնագագաթը, դարերի մշուշում վերանվանվեց «Իշեղլու»:

Վահագն բառը, անգամ հայերի համար, դժվար արտասանվող բառ է: Այն ավելի դժվար արտասանելի պետք է լիներ օտար ժողովուրդների համար: Այնպես որ, Սյունիքը միջնադարում գտնվելով օտարների վերահսկողության տակ, նրանք վերանվանել կամ թարգմանել են այն տեղանունները, որոնք իրենց լեզվին չեն հարմարվել: Իսկ «Իշեղ» թուրքական բառը հայերենում նշանակում է «լույս, կրակ»: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հնդեվրոպական լեզվում և սանսկրիտում Արևը մարմնավորող աստվածը կոչվել է «Բահագն-Վահագն-Վեհ Ագն-հզոր կրակ» (այսպիսի վերծանումը պատկանում է հնդեվրոպերենի ճանաչված մասնագետ Վյաչ. Իվանովին), ապա թուրքերը այն պարզապես թարգմանել են՝ կոչելով «Իշեղլու»: Այժմ եթե պատմության անիվը ետ պտտենք, ապա կունենանք «Իշեղլու, կրակ-Ագն-Հզոր Կրակ-Վեհ Ագն-Վահագն» և պարզապես Արեգակ կամ արևածագի լեռնագագաթ:

Եթե առաջադրված միտքը հաստատող այլ նյութական ապացույցներ չլինեին, ապա այս ասելիքը նվազ հետաքրքիր կլիներ: Բարեբախտաբար առ այսօր պահպանվել են որոշ հետքեր, որոնց կծանները ուղղակի մեզ տանում են Վահագն աստծո ծիսակատարումների երկրային սրբազան կայանը՝ Մեհյանատունը:

Վահագնի կերպարը նկարագրելիս մեր պատմիչները վկայում են, թե մեր նախնիները «զԱրեգակն պաշտեցին և Վահագն կոչեցին»:

Հետաքրքրական է առանձնացնել մի հանգամանք ևս. Սյունյաց աշխարհում Որոտնավանքի տարածքը մի բնական առանձնահատկություն ունի: Նա տեղակայված լինելով մի ոչ մեծ բլրի գագաթին, որոշակի հեռավորության վրա շրջափակված է համարյա ուղղահայաց լեռներով: Այդ լեռնապարը ձայների արձագանքման հզոր ռեզոնատորի դեր է խաղում և ամպրոպ-որոտների ժամանակ ձայնի բազմապատիկ ուժեղացման, կանգուն ալիքների ձևով, երկարատև արձագանքման տեսիլք է ըստեղծում:

Մովսես Խորենացու գրի առնված առասպելապատումներից տեղեկանում ենք, որ Վահագնի երկրային սրբազան տաճարը գտնվել է եղեգնուտներով հարուստ գետի ափին, ուր արածել են նրա հրեղեն ձիերը, և որտեղ նա հաճախ հանդիպել է պտղաբերության աստվածուհի Աստղիկ դիցուհու հետ: Այսպիսի գետ Որոտանն է, իսկ Որոտնավանքի ափերը հարուստ են եղեգնուտներով:

Հետաքրքրական է նշել, որ Որոտնավանքից դեպի Վահագնի լեռնագագաթ տանող ճանապարհին, մոտ 4 կմ հեռավորության վրա, գտնվում է պտղաբերության աստվածուհի Աստղիկի մեհյանատեղին, հռչակավոր Պորտաքարը: Ըստ ավանդության և ժամանակակից սովորության, չբեր կանայք Պորտաքարի վրա պար բռնելուց հետո իջնում են, Ջոռ-Ջոռ կոչվող աղբյուրից ջուր խմում և հղիանում: Աղբյուրի շրջակայքում այժմ էլ կան պիթոններ, որոնց տեղացիները կոչում են վիշապներ: Վահագն այրը պետք է որ պայքարեր ջրի ակունքները, ինչպես նաև Աստղիկ դիցուհու ճանապարհը փակող ահագնու վիշապների դեմ: Վիշապաքաղ մականունը, հավանաբար, այստեղ է տրվել Վահագն աստծուն և առասպել դարձած հասել մինչև մեր օրերը: Ըստ Մովսես Խորենացու վկայության, Վահագն աստծուն նվիրված դյուցազներգությունները ու ձոները, փամփիռների նվագակցությամբ, կատարել են Սյունյաց աշխարհի Գողթան գուսանները:

Բերենք Վահագնի ծննդյանը նվիրված հանրահայտ ձոնը.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկն եղեգնիկ:

Ընդ եղեգան փող ծուխ
ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր
Խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ունէր,
. . . .
Բոց ունէր մօրուս,
Աչկունքն էին արեգակունք:

Մեր կարծիքով, այն բնութագրում է Վահագնին իբրև երկնային աստված՝ Արեգակ-Բահագն-Վահագն-Վեհ Ագն-Հզոր կրակ, իսկ որպես երկրային աստծո կերպար՝ կայծակ, գնդաձև կայծակ, ամպրոպ-որոտներ: Գուսանների կողմից գովերգվող Վահագնի ծնունդը հենց գնդաձև կայծակի երևակումն է, որը ծնվում է երկրի և երկնքի երկունքից, բոց ու ծուխ դարձած ամպրոպ-որոտներից: Այդ իսկ պատճառով սրբազան տաճարը՝ մեհյանատեղին, ավելի շուտ պետք է փնտրել Որոտների աստծո մեհյանատանը՝ Որոտնավանքի ժամանակակից տարածքում:

Ուշագրավ է նշել նաև հետևյալ փաստարկը:

Աստվածների և նրանց սրբազան ծառաների պատվին ձոնվող «զերգերը երաժշտականաց» ստեղծագործվել են ինչպես Սյունյաց աշխարհի Գողթնում, այնպես էլ Որոտնավանքում: Այդ ավանդները շարունակվել են նաև միջնադարում: Ձոներգերի ստեղծմանը մասնակցել են անգամ Սյունյաց երևելի տիկնայք՝ Որոտնավանքի դուստր Սահականդուխտ Սյունեցին և Խոսրովանդուխտ Գողթանեցին:

Կարծում ենք, ավելորդ չէ ուշադրություն դարձնել նաև հետևյալ փաստին: Որոտնավանքը գտնվում է այժմյան Վաղուդի կոչված գյուղի մոտ, որը միջնադարում, ըստ Որոտնավանքի գրիչ, «Նահանգն Սիսական» գրքի հեղինակ Ստեփանոս Օրբելյանի, կոչվել է Վաղհանդ: Բացառված չէ, որ քրիստոնեության մուտքից առաջ այն հնչել է Վահագն: Նման տառադարձությունը մեր լեզվում թույլատրելի է և հնչողությամբ Վաղհանդ-Վահագն բառերն իրարից այնքան էլ հեռու չեն:

Իհարկե, գործին նպաստող փաստարկներ կարող են-էին բերվել, դրանք բավականին շատ են և չուսումնասիրված: Հատկապես ուշադրության է արժանի «Դիք-Դիք քարեր» կոչվող մեհյանատեղին, որի ճարտարապետական հետքերը առ այսօր էլ կան:

Հ. ԲԱԽՇՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՌՖ ինստիտուտ

Միլես Գարդեն... Միլեսյան այգի: Ստոկհոլմի կենտրոնում ստեղծված այդ հսկա այգին՝ ծառուղիներով, լճակներով, շատրվաններով ու բլուրներով կարող էր և առանձնապես մեծ արժեք չներկայացներ հյուսիսային այդ գեղեցիկ մայրաքաղաքի համար, եթե չլիներ մի հանգամանք: Արվեստն ու արվեստագետին գնահատող շվեդական իշխանություններն այդ հսկա տարածքը տրամադրել են աշխարհում ճանաչված քանդակագործ Միլեսին, որի տասնամյակների ընթացքում ստեղծած քանդակները, արձաններն ու հետաքրքիր կոմպոզիցիաները միջազգային ճանաչում բերեցին շվեդական մայրաքաղաքի աղոտրիկ ու խաղաղ այդ անկյունին: Արվեստի նկատմամբ նման հոգատարությունը եզակի չէ այս քաղաքում:

ԺՊԻՏՆԵՐ

ՌՈՍՍԻՆԻԻ ՓՈՂՈՑԸ

Սինյոր Պիկկոլոն բացեց պատուհանը և ձայն տվեց անցորդին.

— Հյա մի րոպե կանգ առեք:

— Ի՞նչ է պատահել:

— Ես հիմա ձեզ կբացատրեմ, թե որտեղ է գտնվում Ռոսսինիի փողոցը: Կգնաք ուղիղ, հետո կթեքվեք աջ, ապա ձախ և մի քանի րոպեից կլինեք տեղում:

— Շատ շնորհակալ եմ, սակայն ինձ բացարձակապես չի հետաքրքրում, թե որտեղ է գտնվում այդ փողոցը: Ես հակառակ կողմն եմ գնում:

— Իսկ ինձ համար էլ կարևոր չէ, թե ինչն է ձեզ հետաքրքրում: Բայց, որ Ռոսսինիի փողոց կարող եք գնալ միայն այն ձևով, ինչպես ես բացատրեցի, դա անառարկելի է: Կպչում եմ, հասկացաք ինձ:

— Ներողություն, հարգելիս, բայց ձեր բացատրությունն ինձ ամենևին պետք չէ: Ասացի, չէ՞, ես ուրիշ տեղ եմ գնում:

— Ես դա արդեն լսեցի:

— Դե ուրեմն ձեզ պահեք ձեր խորհուրդները:

— Այ քեզ անշնորհակալ մարդ: Մի՞թե ձեզ համար հաճելի չէ, որ ես ինքնակամ ուզեցի. ծառայություն մատուցել ինձ համար բոլորովին անծանոթ մի մարդու:

— Բայց, գրողը տանի, ես առանց ձեզ էլ հրաշալի գիտեմ, թե որտեղ է Ռոսսինիի փողոցը և ինչպես գնալ այնտեղ:

— Մի, մի հյա սրան նայեք: Իսկ ինչո՞ւ հենց սկզբից ինձ չասացիք այդ մասին: Ես իմ թանկ ժամանակը վատնում եմ նրա վրա, ինձ ենթարկում մրսելու վտանգի, իսկ ինքը, պարզվում է, գիտի ճանապարհը: Անբարոյական և անամոթ մարդ եք դուք, ահա թե ինչ կասեմ ձեզ,— զայրացած հայհոյեց սինյոր Պիկկոլոն և շրխկոցով փակեց պատուհանը:

ՄՏՔԻ ՎԱՐԺԱՆՔԸ՝ ՋԱՌԱՄԱԽՏԻ ՍՊԵՂԱՆԻ

Նոբելյան մրցանակի դափնեկիր, նշանավոր գիտնական-քիմիկոս Լայնուս Պոլինգը (նա վախճանվեց վերջերս) 93 տարեկան հասակում շարունակում էր գիտությամբ զբաղվել և դասախոսություններ կարդալ:

Մեր շրջապատում էլ քիչ չեն մարդիկ, ովքեր հակառակ իրենց պատկառելի տարիքին, շարունակում են ակտիվ աշխատել, ստեղծագործել: Ի վերջո, ծերությունը արատ չէ, այլ մարդկային վիճակ և պետք է խիստ անհատական մոտեցում ունենալ ամեն մեկի մասին որոշում ընդունելիս: Ստորև հրապարակվող հոդվածը ասես մեկ անգամ ևս հաստատում է, որ «համատարած թոշակավորման» գործընթացը, որը հաճախ գնցում է մեզ, անհիմն է և նույնիսկ հասարակությանը վնասակար: Թոշակի անցնելը պարտականություն կամ պատիժ չէ, այլ միայն իրավունք է, որից կարող են օգտվել մարդիկ: Իտալական «Լա սթամպա» թերթից արտատպվող այս հոդվածը վկայում է, որ հարցը պրոբլեմատիկ է ամբողջ աշխարհում:

Այսօր կան մարդիկ, որոնք սկուզենին թոշակի գնալ 60, անգամ 50 տարեկանում: Սակայն, բարեբախտաբար, շատ են նաև նրանք, ովքեր թոշակի գնալը համարում են իրենց մտավոր ընդունակությունները հուղարկավորելու սկիզբ և պատրաստ են ամեն ինչի (ընդհուպ փաստաթղթերի կեղծում), որպեսզի որքան հնարավոր է, հետաձգեն ակտիվ կյանքին հրաժեշտ տալը:

Այդ մեծ և փոքր ՊՈԼԻՆԳՆԵՐՆ աշխատում են գիտական տարբեր հաստատություններում, լաբորատորիաներում: Ովքե՞ր են նրանք՝ ֆանատիկոսնե՞ր, մազոխիստնե՞ր, թե, ինչպես ամերիկացիներն են ասում, աշխատավոր ԳՈԼԻԿՆԵՐ: Ո՛չ, դրանք մարդիկ են, որոնք պարզապես ուզում են զբաղվել իրենց գործով, որովհետև սիրում են այն:

Իր կառավարման վերջին տարին պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանն օրենք անցկացրեց, որը վերացրեց սահմանված տարիքի հասնելուց հետո պարտադրաբար թոշակի ուղարկելու կարգը, բացառությամբ՝ հրշեջների, ոստիկանների և զինվորականների: Մյուս բոլոր մասնագիտությունների համար ստիպողաբար թոշակի ուղարկելը որակվում է որպես «քաղաքացիական իրավունքների խախտում» կամ «խտրականություն տարիքի համար», որը պատժվում է օրենքով:

Այսօր գիտական աշխատողները հաճախ են դիմում այդ օրենքի օգնությանը: Ամենավերջին տվյալներով գիտնականների 90 տոկոսից ավելին շարունակում են հետազոտություններով զբաղվել 70 տարեկանից հետո, իսկ 70 տոկոսը՝ անգամ 80 տարեկանից հետո:

Դադարեցնելով իրենց վարչական կամ դասախոսական գործունեությունը, այդպիսի գիտնականները հնարավորություն են ստանում, ինչպես երիտասարդ տարիներին, լիովին նվիրվել գիտական հետազոտություններին: Նրանց համար չափազանց օգտակար է շփումը ուսանողների և երիտասարդ գործընկերների հետ:

Դա վերաբերում է ոչ միայն գիտնականներին, այլ նաև բոլոր նրանց, որոնք զբաղվում են ստեղծագործական աշխատանքով և որոնց չեն հետաքրքրում բրիջը, գոլֆը կամ այգեգործությունը: Ի դեպ, շատ գիտական աշխատողներ սիրում են գոլֆ խաղալ:

Մենք պետք է ստիպենք մեր ուղեղին անընդհատ աշխատել: Ալցհեյմերի հիվանդության (ծերունական տկարամտության) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որքան մարդ շատ է ուսանում, որպես կանոն, այնքան քիչ է նրան սպառնում այդ հիվանդությունը:

Այս ֆենոմենն ունի երկու բացատրություն. ըստ առաջին հիպոթեզի, որը հիմնված է տարեց կենդանիների ուսումնասիրությունների վրա, հիշողության կորուստն այնքան էլ զգալի չէ նրանց մոտ, որոնք գտնվում են այնպիսի պայմաններում, երբ անհրաժեշտ է մշտապես լուծել այս կամ այն խնդիրները: Սա շատ ավելի որոշակի է, երբ տարեցները գոյակցում են ջահել կենդանիների հետ: Ի դեպ, այդ հարևանության շնորհիվ երիտասարդներն ավելի արագ են զարգանում:

Ըստ մյուս, առավել հետաքրքիր վարկածի, մարդկային ուղեղում ընթանում է տոկսիկ նյութերի կուտակում, որը կապված է նյարդային բջիջների մշտական մահացման հետ: Հենց այս պարագան էլ վերջին հաշվով հանգեցնում է Ալցհեյմերի հիվանդության: Խոսքը վերաբերում է պրոտեինին (որ ստացել է ամիլոիդ անունը), որը մեծ քանակությամբ արտադրում է գլխուղեղը:

Նորմալ պայմաններում հիշյալ նյութը տոկսիկ չէ, ընդհակառակը, այն խթանում է բջիջների համագործակցությանը, որը վճռական դեր ունի հիշողության պահպանման և ուսումնառության ընթացքում: Ամենայն հավանականությամբ մտավոր գործունեությունը նպաստում է ամիլոիդի դրական ներգործությանը և արգելակում է նեգատիվ երևույթների հնարավորությունը: Ինչպես որ ֆիզիկական վարժանքներն են պահպանում մեր մկանները ու երակները, այնպես էլ ակտիվ մտավոր գործունեությունը կարող է բարերար ազդեցություն ունենալ մարդու ուղեղի վրա:

Քանի որ մենք հիշողության կորստյան կամ ծերունական տկարամտության բուժման արդյունավետ միջոցներ չունենք, երևի թե մտավոր գործունեությունն առայժմ ջառամախտից պաշտպանվելու միակ սպեղանին է:

Վիճակագրությունը միաժամանակ համոզիչ կերպով հաստատում է, որ ըստ մասնագիտության, ակտիվ կյանքից միապաղաղ գոյության անցնելը թոշակառուին սպառնում է (երբեմն չափազանց արագ) մտավոր ընդունակության վատթարացում: Մինչդեռ կարելի է անսահման օրինակներ հիշել, երբ նկարիչները, երաժիշտները, ճարտարապետները, գիտնականները, գրողները իրենց լավագույն ստեղծագործություններն արարել են 70 և անգամ 80 տարեկանից հետո:

Ամերիկյան կոմիկ Ջորջ Բերնսը, որը ներկայացումներ է տալիս Լաս-Վեգասում, օրերս դարձավ 98 տարեկան: Վերջերս նա պայմանագիր ստորագրեց գալա-ներկայացման համար, որը նա բեմադրելու է 1996 թվականին, ի պատիվ իր 100-ամյակի:

Ճշմարիտ է, ոմանք առարկում են գիտնականների և արտիստների պրոֆեսիոնալ գործունեությունը երկարացնելու դեմ, քանի որ, ըստ նրանց, դա փակում է երիտասարդների ճանապարհը: Իհարկե, որոշ դեպքերում մտքի տարեց գործիչները, որոնք պատրաստ են աշխատել նաև ոչ բարձր վարձատրությամբ, կարող են պրոբլեմներ ստեղծել երիտասարդների համար: Սակայն մեծ մասամբ դա այդպես չէ: Նրանք, օրինակ, չեն հավակնում աշխատել նորագույն լաբորատորիաներում, անպայման ղեկավար դիրք զբաղեցնել և պատրաստ են աշխատել ամենահամեստ պայմաններում: Մի խոսքով, ծերունիները ծանրակշիռ նեցուկ են ինչպես գիտության, այնպես էլ հասարակության համար:

ԾԱՆՈԹԱՑԵՔ. ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ԼՐԱԳՐՈՂԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պի լուսավորական համարձակ գաղափարները, բռնակալության քննադատության հզոր պաթոսը: Չաշխատակցելով հանդերձ «Ազդարարին», հայ հրապարակախոսն, այնուամենայնիվ, կատարում է իր քաղաքացիական պարտքը և վերջին ելույթում ընթերցողներին ուսուցանում հետևել ժամանակի լուսավորական-առաջադիմական գրականությանը և դասեր քաղել դրանից:

Երկու ամիս անց, դադարում է հրատարակվել և «Ազդարարը»:

Իրականում ո՞վ էր Հարություն Շմավոնյանի «Ուրախակից Բարեկամը»՝ Սեթ Սամյանը: Նրա կենսագրության ժլատ տվյալները քաղել ենք Մեսրոպ Թաղիադյանի «Ազգասեր Արարատյան» հանդեսում տպագրված մահախոսականից (1848 թ. հատոր Ա, թիվ 1): Սամյանը ծնվել է 1771 թ. սեպտեմբերի 22-ին, Նոր Ջուղայում, վախճանվել է 1848-ի հունիսի 19-ին. վաղ հասակում ընտանիքի հետ տեղափոխվել է Մադրաս, որտեղ անց է կացրել ողջ կյանքը: Ինչպես գրում է մահախոսականի հեղինակը, գրագիտությամբ և զարգացման աստիճանով նա առաջիններից մեկն է եղել գաղթօջախում: Նա ոչ միայն «Ազդարարի» աշխատակիցը և հովանավորն է եղել, այլև հորդորել է շատերին՝ օգնել ամսագրի գործերին: Ասվում է նաև, որ նրա համբավն այնքան է տարածվել, որ հայագետ Ծահան Ջրպետը Փարիզից դիմելով նրան՝ նյութեր է խնդրել ազգային պատմության վերաբերյալ (հավանաբար հնդկահայ գաղթօջախի) և Սամյանը «երկարորեն պատասխանել է ըստ պատշաճին»:

Մեսրոպ Թաղիադյանն իր հերթին ավելացնում է, որ Սամյանի մահվան գույժի տպավորության տակ երկու բանաստեղծություն է գրել, որոնք իր մեծ վշտի «տկար ապացույցն են» («ի Սեթ Սամ» և «Նոր Ջուղա»): «Ի Սեթ Սամ» բանաստեղծության մեջ արտահայտել է իր խոր վիշտը և դրվատել Սամյանի արժանիքները: «Ազդարարի» հրապարակախոսին Թաղիադյանը մեծարել է՝ կոչելով. «Գրիչ հզոր և գրոց հայի» գիտուն, իմնոց բարերար»:

Կարծում ենք հայ հասարակական մտքի պատմության ուսումնասիրողները պետք է արժանին հատուցեն «Ազդարարի» առաջին հրապարակախոսին, որն իր հոդվածներով նախանձելի նրբաճաշակությամբ վեր է հանել հրապարակախոսության խնդիրները և ընդգծել մամուլի դաստիարակչական դերը: Նա պարզել է «Ազդարարի» կոչումը՝ գաղթօջախի հայության ազգային ինքնաճանաչողության հասցնելու և հայրենիքի ազատության գաղափարով նրանց ոգևորելու գործում: Հայ ժողովրդի տաղանդաշատ որդին թեև կրթություն չէր ստացել պաշտոնական վարժարաններում, բայց հասակ առնելով մադրասյան լուսավորիչների ավագ սերնդի ստեղծած ազգասիրական մթնոլորտում, ձևավորվել և դարձել է երկրորդ սերնդի լուսավորիչներից մեկը:

Սեթ Սամյանը լրագրողի իր ազնիվ լուման է ներդրել հայ առաջին պարբերաթերթի հրապարակախոսության ազգային ոգին ձևավորելու գործում:

Մարգո ՄԽԻԹԱՐՅԱՆ



Շանանսո. միջնադարյան դղյակ Լուարայի ափին: Այստեղ ոչ միայն ապրել է Ֆրանսուա Առաջինը, այլև այս դղյակը պատմական շատ իրադարձությունների վկան է: Նրա սրահներում ծնվել են ֆրանսիական պալատական բազմաթիվ ինտրիգներ, կատարվել են սպանություններ ու այլ խարդավանքներ: Նրա սրահներով անցել են Մարիա Անտուանետան, բրիտանական ու իսպանական դեսպանները, այստեղից արձակվել են պատերազմներ սկսելու հրամաններ, կնքվել են դաշինքներ: Այդ ամենին յուրաքանչյուր տարվա սեպտեմբերին դուք կարող եք տեղեկանալ, մասնակցելով Շանանսոյի տարեկան ներկայացմանը՝ լույսի, ձայնի օգնությամբ կազմակերպված հրաշալիքին:

Ստացված ամբողջ միջոցներն օգտագործվում են դղյակի և պատմական այլ հուշարձանների խնամքի, պահպանման համար:

Սովորելու շատ բան ունենք...

ՄԻ՞ԹԵ...

ԱԼԿՈՀՈԼԸ՝ ԸՆԴԴԵՄ ՍՐՏԻ ԿԱԹՎԱԾԻ

Ամերիկյան գիտնականների կարծիքով, ոգելից խմիչքների որոշ քանակության օգտագործումը կարող է պաշտպանիչ լինել սրտի կաթվածից:

Ոգելից խմիչքների օգտագործման և սրտի կաթվածի շատ ուսումնասիրություններ կենտրոնացվել են այն խնդրի վրա, թե ինչպես են գինիներն ու մյուս խմիչքներն ազդում արյան անոթներում առկա խոլեստերինի վրա:

Նրանք գտել են, որ ալկոհոլի օգտագործումը բարձրացնում է այսպես կոչված «լավ խոլեստերինի» մակարդակը, որը նպաստում է տրոհելու այն խոլեստերինը, որը գոյանում է անոթի պատերին և խցանում է այն: Եվ խոչընդոտելով արյան բնականոն հոսքը, հանգեցնում է սրտի կաթվածի: Սակայն, ամերիկյան բժշկական ընկերության ամսագրի համարներից մեկում տպագրված նոր ուսումնասիրության վերաբերյալ հոդվածն ալկոհոլի օգտագործումը կապում է օրգանիզմի մեկ այլ քիմիական պաշտպանողական մեխանիզմի հետ: Բոստոնում, Հարվարդի բժշկական ֆակուլտետից դոկտոր Ռիբկերն ամերիկյան հեռուստատեսությամբ ելույթ ունենալով ասաց, թե ալկոհոլ օգտագործողը կարող է արյան մեջ խթանել կենսական նշանակության որոշակի բջջանյութի ավելացմանը, որը հայտնի է Թիփիէյ անվամբ և որն արտադրվում է զարկերակները կազմող բջիջների կողմից: Դոկտոր Ռիբկերն ասում է.

— Մեր ուսումնասիրության նախնական հայտնագործությունն այն է, որ այն անհատների մոտ, ովքեր օգտագործում են միջինից չափավոր քանակի ոգելից խմիչքներ, ավելի շատ է արտադրվում Թիփիէյ տեսակի բջջանյութ և դա, իրոք, քայքայում է արյան մակարդուկները: Փաստորեն, դա այն նույն բջջանյութն է, որն օգտագործում են բժիշկները սրտի կաթվածով հիվանդներին բուժելիս:

Դոկտոր Ռիբկերն ու իր պաշտոնակիցները չափել են Թիփիէյ բջջանյութի քանակն այն արյան նմուշներում, որ վերցրել են հետազոտության համար Միացյալ Նահանգների տղամարդ բժիշկների ավելի ծավալուն առողջապահական ծրագրին մասնակցած 630 առողջ բժիշկներից:

Նրանք գտել են, որ այդ բջջանյութի քանակն ավելի բարձր է նրանց մոտ, ովքեր օրական օգտագործում են երկու և ավելի բաժակ ոգելից խմիչք, մինչդեռ ավելի ցածր մակարդակներն նրանց մոտ են, ովքեր բոլորովին չեն օգտագործում կամ անկանոն են օգտագործում ոգելից խմիչքը: Դոկտորն ասում է, թե ուսումնասիրությունը հաստատում է, որ ալկոհոլի օգտագործումը նպաստում է սրտի կաթվածի կանխելուն: Սակայն նա նախազգուշացնում է չափից ավել ալկոհոլ օգտագործումից, ասելով, թե դրական ազդեցություն կարելի է առաջանալ չափավոր օգտագործումից: Այդ մասին նա նշում է.

— Ավելի ու ավելի շատ օգտագործելը չի նշանակում, թե օգուտը շատ կլինի, միայն չափավոր օգտագործումը կարող է դրական արդյունք տալ, դա նշանակում է օրական խմել մեկ-երկու բաժակ: Ոգելից խմիչքի տեսակը էական չէ, մեկ բաժակ գինի, մեկ շիշ գարեջուր կամ մեկ ըմպանակ լիկյոր, թվում է, թե նույն ազդեցությունն ունեն:

Պարզվել է, որ չափից ավելի խմիչք օգտագործելը կարող է առաջացնել սրտի այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են առիթմիան և արյան բարձր ճնշումը: Այն մեծացնում է նաև լյարդի, ստամոքսի և տարբեր տեսակի քաղցկեղների, կրծքի, որովայնախոռոչի հիվանդությունների հավանականությունը:

Դոկտորն այն կարծիքին է, թե կգտնվի ավելի հարմար միջոց՝ կարգավորելու համար օրգանիզմի կողմից արտադրվող Թիփիէյ բջջանյութի քանակը:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ՍՈՒՐՃ

Հայտնի է, որ սուրճը հաճելի համ ու բուրմունք ունենալու հետ, միաժամանակ բարձրացնում է առույգության զգացողությունը։ Սուրճի մեջ պարունակած կոֆեինը դրականորեն է ազդում մարդու հոգեկան և ֆիզիկական գործունեության վրա։ Բացի այդ, կոֆեինը, կաֆեոլը և սուրճի մյուս բաղադրիչները նպաստում են ստամոքսահյութի արտադրության պրոցեսին։ Մաքուր վիճակում սուրճը խորհուրդ չի տրվում երեխաներին, սրտի խփոցով, ստամոքսի բարձր թթվայնությամբ և արյան բարձր ճնշումով տառապող մարդկանց։ Սուրճը երկար եփել չի կարելի, որովհետև բուրումնավետ նյութերը ցնդում են, և այն դառնում է անհամ։

Միացյալ Նահանգներում վերջերս կատարված հետազոտությունները (17 հազար մարդ երկար ժամանակ գտնվում էին մասնագետների հսկողության տակ) ցույց տվեցին, որ սուրճը, անգամ մեծ քանակությամբ օգտագործելու դեպքում, ոչ մի բացասական ազդեցություն չի գործում սրտի աշխատանքի վրա։

Բայց, ինչպես հին իմաստությունն է ասում՝ ոչինչ մի չարաշահեք։ Եվ սա վերաբերում է նաև առույգացնող ըմպելիքներին։

ՄԱՂԱԴԱՆՈՍ

Անհիշելի ժամանակներից մաղադանոսն օգտագործվում է որպես ախորժակ բացող, կոսմետիկական և բուժիչ հրաշալի միջոց։ Սկզբում այն հայտնի է եղել հին Հունաստանում, Հռոմում, Արևելքի մյուս երկրներում։

Մաղադանոսի սերմի հատիկները պարունակում են ճարպեր և եթերայուղ, գլյուկոզաներ, ֆլավոնիտներ և ուրիշ նյութեր, իսկ կանաչ տերևները՝ կարոտին, վիտամին C, եթերայուղ։ Թե որպես համեմունք այն ինչ չափով է օգտագործվում մեր ամենօրյա սննդում, կարծում ենք նորից անդրադառնալու հարկ չկա։ Սակայն մաղադանոսն ավելի նշանավոր է իր բուժիչ հատկություններով։ Ըստ որում, առողջարար են և՛ տերևները, և՛ ցողունը, և՛ արմատները, և՛ մանավանդ՝ սերմի հատիկները։

Գերմանական ժողովրդական բժշկությունը մաղադանոսի սերմի կամ արմատների ջրում եփած հյութն առաջարկում է որպես ախորժակ բացող, մարսողությանը նպաստող, մենստրուացիան կարգավորող միջոց։ Միաժամանակ այն խորհուրդ է տրվում երիկամների, միզապարկի, միզակապության հիվանդությունների, սրտի անբավարարությամբ պայմանավորված պրոցեսների դեպքում։ Կանաչ մաղադանոսը դրվում է մարմնի հիվանդ մասերին՝ որպես ցավազրկիչ և հակաբորբոքային միջոց։ Մանր աղացած սերմերով տրորվում է մաշկը՝ ճաղատացումը (մազաթափությունը) կանխելու համար։

Արմատների եփած թունդ թուրմը, լիմոնի հյութի հետ խառնած, ժողովրդական հրաշալի միջոց է պեպենների և մաշկի վրա առաջացող պիգմենտացիոն բծերի դեմ։ Որոշ ժամանակ այդ խառնուրդը օրը երկու անգամ (առավոտյան և երեկոյան) պետք է քսել դեմքին։

Տնօրեն՝ Լավրենտի ԲԱՐՍԵՂՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ. Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 բ, հեռախոս՝ 22-44-26:
Դասիչ՝ 69238: Գրանցման վկայական 338:

Թերթը տպագրվել է ՀՀ կառավարության «Պարբերական» հրատարակչությունում: Հասցեն՝ Արշակունյաց 2: Ստորագրված է տպագրության 15.11.94 թ.: